

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Ուշադրութեան Կարօտ Պարագայնը Եւս

Հայաստանի նախկին՝ հանրապետական իշխանութիւններու գործած բազմաթիւ աներեւոյտ շարքին պէտք է դասել դպրոցներու եւ կրթական բարձրագոյն հաստատութիւններու կուսակցականացումը: Տարիներ շարունակ երկրորդական վարժարաններու տնօրէնները եւ ուսուցչական կազմերը օգտագործուեցան ընտրութիւններ կեղծելու եւ հանրապետականներուն համար քուէներ ապահովելու նպարտակով:

Միւս կողմէ, ՀՀ-ի դաշնակից մէկ այլ կուսակցութեան՝ ՀՅԴ-ի ներկայացուցիչները բազմաթիւ անգամներ ստանձնելով կրթութեան նախարարի պաշտօնը, ջանք չխնայեցին պատմութեան դասագրքերուն մէջ ուռնացնելու իրենց կուսակցութեան դերակատարութիւնը՝ 19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկզբնաւորութեան հայ ժողովուրդի համար բախտորոշ ժամանակաշրջանի իրադարձութիւններուն ընթացքին, միաժամանակ նուազեցնելով ու թերագնահատելով այլ կուսակցութիւններու եւ յատկապէս Հնչակեան Կուսակցութեան մասնակցութիւնը քաղաքական եւ ինքնապաշտպանական գործողութիւններուն:

Երեւանի մէջ գործող ՍԳՀԿ «Տիրունի» ուսանողական-երիտասարդական միութիւնը, այս ուղղութեամբ բաւական լուրջ աշխատանք կատարելով ուսումնասիրած է Հայաստանի հանրակրթական դպրոցներուն մէջ առկայ պատմութեան դասագիրքերու ներկայիս պարունակութիւնը, ի՞նչ յայտնաբերելով վրիպակներու եւ աղաւաղումներու շարք մը: Պատրաստուած ուսումնասիրութիւնը կեդրոնացած է պատմութեան դասագիրքերուն մէջ ՍԳ Հնչակեան կուսակցութեան վերաբերեալ սխալ տեղեկութիւններուն վրայ:

Պատմական փաստարկներու վրայ պատրաստուած ուսումնասիրութիւնը յղուած է Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան նախարար Ա. Յարութիւնեանին, միաժամանակ առաջարկելով կազմակերպութեան պատրաստակամութիւնը՝ օժանդակելու անհրաժեշտ ուղղումները կատարելու եւ դասագրքերու յաջորդ տպագրութիւնները նուազ դերի դարձնելու աշխատանքին:

Կ'ակնկալուի, որ նոր նախարարն ու իր աշխատակազմը առիթը կ'ունենան անդրադառնալու սրբագրութեան կարօտ այս կարեւոր հարցին եւս, որպէսզի Հայաստանի ուսանողութիւնը պատմութեան ծանօթանայ իեռու քաղաքական նպատակներէ, անաչառ եւ գիտական հիմունքներով պատրաստուած դասագրքերու ընդմէջէն:

«ՄԱՍԻՍ»

## «Գերմանիան Պատրաստ է Արցախեան Հարցով Աջակցիլ Հայաստանին». Անկելա Մերքել

Հայաստան-Գերմանիա միջպետական յարաբերութիւններու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով Գերմանիոյ վարչապետը ժամանեց Երեւան: «Զուարթնոց» օրակազմին մէջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան դիմաւորած Անկելա Մերքելին:

Օդակառանչն Մերքել ուղեւորուեցաւ Ծիծեռնակաբերդի չուշահամալիր, ուր յարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին:

Հանրապետութեան նախագահի նստավայրին մէջ տեղի ունեցաւ նախագահ Արմէն Սարգսեանի եւ Գերմանիոյ վարչապետի հանդիպումը, որուն մասնակցած են երկու երկիրներու պատուիրակութիւնները:

Վարչապետ Փաշինեանի հետ տեղի ունեցած հանդիպումի աւարտին կայացած համատեղ մամուլի ասուլիսի ընթացքին, Անկելա Մերքել ըսաւ. «Ուրախ եմ գտնուիլ երկրի մը մէջ, որն ունի բարձր մշակութային եւ պատմական ավանդույթներ, բայց նաեւ բաց է ապագայի առջեւ»:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան ինչորին՝ երոպացի բարձրաստիճան պաշտօնեան նշեց. «Գերմանիոյ Պունտեսթակի



Անկելա Մերքել Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի մօտ յարգանքի տուրք կը մատուցէ Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին

կողմէն ընդունուած բանաձեւի ոգիով ես եղած եմ Ծիծեռնակաբերդ, իմ յարգանքի տուրքը մատուցած եմ: Այն ինձի համար իրաւաբանական ինչոր չէ»:

«Անցեալ ամիսներուն հետեւած ենք ձեր երկրին մէջ տեղի ունեցած ցոյցերուն եւ թաւշեայ յեղափոխութեան: Մենք Նիկոլ Փաշինեանի հետ խօսեցանք այն մասին, թէ ինչպիսին պէտք է ըլլան մեր յարաբերութիւնները: Անոնք շատ լաւ են բայց կրնան

աւելի ընդլայնուիլ: Մենք լաւ օրակարգ ունինք մշակութային եւ տնտեսական բնագաւառներուն մէջ: Մենք կրնանք համագործակցիլ թուայնացման, ռեսուրսներու (միջոցներու), պաշարներու, կրթութեան ոլորտին մէջ: Հայաստանի մէջ կը գործեն դպրոցներ, ուր խորացուած գերմաներէն կ'ուսուցանուի: Գերմանական գիտական կազմակերպութիւններուն հետ յա-

Շար.ը էջ 5

## Նոր Սերունդ Մշակութային Միութեան Կազմակերպութեամբ Թաթուլ Յակոբեան Ելոյթ Ունեցաւ Կլէնտլի Կեդրոնական Գրադարանէն Ներս



Լրագրող Թաթուլ Յակոբեան եւ Յարութ Տէր. Դաւիթեան ասուլիսի ընթացքին

Ուրբաթ, Օգոստոսի 24-ի երեկոյան, Կազմակերպութեամբ Նոր Սերունդ Մշակութային Միութեան, Կլէնտլի Կեդրոնական Գրադարանէն ներս տեղի ունեցաւ հրապարակային հանդիպում՝ ՍԻՎԻԼ-ՆԵԹ-ի լրագրող եւ Հայկական ռուսամասիրութիւններու ԱՆԻ կեդրոնի համակարգող Թաթուլ Յակոբեանի հետ, Հայաստան թաւշեայ յեղափոխութեանէն ետք Նիկոլին շուրջ

Երեկոյի բացումը կատարեց ու թաթուլ Յակոբեանի կենսագրական գիծերը ներկայացուց ՆՄՄ ատենապետ Յարութ Տէր. Դաւիթեան:

Ելոյթի ընթացքին Յակոբեանը թաւշեայ յեղափոխութեան մասին պատմեց, որպէս լրագրող, որ գետնի վրայ հետեւած էր ծաւալուող եւ ապա մեծ թափ ստացող

## Հայաստանը Վեթո Պիտի Կիրառէ, Եթէ ՀԱՊԿ-ի Մէջ Քննարկուի Ատրպէյճանի Անդամակցութեան Հարցը

Եթէ դիտարկուի Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) Ատրպէյճանի անդամակցութեան հարցը, Հայաստանը պիտի օգտագործէ վեթոյի իր իրաւունքը: Այս մասին ձեռագրուցի ժամանակ յայտարարած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամուլի խօսնակի ժամանակաւոր պաշտօնակատար Աննա Նաղդալեանը:

«Վերլուծական շրջանակներում քննարկումներ իսկապէս տեղի են ունենում, բայց դրանք իրականացուում են ինչ-որ ենթադրեալ տեղեկատուութեան հիման վրայ: Բարձրաձայնեմ ԱԳՆ պաշտօնական դիրքորոշումը՝ եթէ նման հարց դիտարկուի, Հայաստանը կ'օգտագործի վեթոյի իր իրաւունքը», - յայտարարած է Նաղդալեանը:

Նախորդ տարիներուն տպաւորիչ արագութեամբ զարգացող ռուս-ատրպէյճանական քաղաքական եւ ռազմաթիւնիքական համագործակցութեան ֆոնին ռու-

Շար.ը էջ 5

Շար.ը էջ 5





# ԼՈՒՐԵՐ

## Կարո Փայլան եւ Արաթ Տինք Յարձակման Ենթարկուեցան Թուրք Ոստիկաններու Կողմէ



Կարո Փայլան կը փորձէ ցուցարարները պաշտպանել ոստիկաններու յարձակումէն

Պոլսոյ Կալաթասարա շրջանին մէջ տեղի ունեցած «Շաբաթ օրուան մայրեր» անուանով նախաձեռնութեան հերթական հաւաքի ընթացքին, Տիարպէթի շրջանի հայ երեսփոխան Կարո Փայլան եւ պոլսահայ լրագրող Արաթ Տինք՝ Հրանդ Տինքի որդին, յարձակման ենթարկուած են թուրք ոստիկանութեան կողմէ:

Փայլան, որ տարբեր առիթներով ալ կը մասնակցի այդ հաւաքներուն ուղղակի թիրախ դարձած է ոստիկաններու յարձակման:

Տեղի ունեցած է պոռչտուք, իսկ ինք Կարո Փայլան բարձր ձայնով եւ պոռալով ըսած է. «Այսօր դուք ամէն տեղ անգէն մարդոց վրայ ձեռք կը բարձրացնէք, կը հարուածէք ու կը բռնադատէք, բայց վստահ եղէք, որ օր մը այս վիճակն ալ պիտի փոխուի թուրքիոյ մէջ, վստահ եղէք...»:

«Տոքուզ հայերի» փոխանցմամբ, հերթական բողոք-նստացոյցի ժամանակ ոստիկանները կանանց բռնութեամբ հեռացուցած են

տարածքէն, ոմանք ձերբակալուած են: «Շաբաթ օրուան մայրեր» շարժման 700-րդ հաւաքի ժամանակ հրապարակի վրայ եղած են նաեւ Կարո Փայլանը, ընդդիմադիր այլ պատգամաւորներ, ինչպէս նաեւ լրագրողներ: Ոստիկանութիւնը ոլորած է անոնց ձեռքերը եւ միայն Կարո Փայլանի յայտարարութենէն ետք ազատ արձակած են պատգամաւորները

«Շաբաթ օրուան մայրեր» նախաձեռնութիւնը հիմնուած է այն մայրերուն կողմէ, որոնք վաղ 70-ականներուն տարբեր պայմաններու տակ կորսնցուցած են իրենց քիւրտ եւ ալեւի զաւակներն ու թողնելով: Տարիներու ընթացքին անոնց միացած են նաեւ տղամարդիկ: Անոնց նստացոյցը վերածուած է շարժման, որ ոստիկանութիւնը ամէն կերպ փորձած է ճնշել:

Անոնք եղած դէպքերուն գլխաւոր պատասխանատուն կը համարեն թուրքիոյ քէմալիստական կարգերը:

## Հայաստանի Կառավարութիւնը Նախաձեռնած է Հարկային Բեռի Թեթեւացում

Նիկոլ Փաշինեանի գլխաւորած կառավարութիւնը նախաձեռնած է հարկային բեռի թեթեւացում: Ֆէյսպուքեան ուղիղ հեռարձակման ժամանակ վարչապետը խոստացած է նուազեցնել եկամտահարկը, իսկ «միջրդպիզներ»ը փաստացի ազատել հարկերէն:

«Մենք շատ աքթիւօրէն քննարկում ենք Հարկային օրէնագրքում փոփոխութիւններ անելը, եւ բաւականին մեծ աշխատանք է կատարուած: Հիմա եւ կարող եմ ասել մի բան, որ մենք կը գնանք հարկային համակարգի պարզեցման եւ մենք կը գնանք եկամտահարկի իջեցման: Եկամտահարկը որոշակիօրէն կ'իջնի: Ես հիմա չեմ ուզում շատ կոնկրետ յայտարարութիւն անել, որովհետեւ այսօր մի քանի սցենարներ կան, թէ որոնցով պէտք է առաջնորդուենք: Ես ուղղակի յստակ ասում եմ, որ եկամտահարկի իջեցում ենք ունենալու», - նախօրէին ըսած էր Փաշինեանը՝ շարունակելով:

Դաւիթ Անանեանի գլխաւորած Պետական եկամտաւորութեան կոմիտէի թաւաքայ յեղափոխութենէն ետք նկատելի առաջընթաց գրանցած է հարկահաւաքման գործին մէջ: Այս տարուան Յունիսին պետական պիւտձէ փոխանցուած է 150,7 միլիարդ դրամ հարկ ու

տուրք, որ նախորդ տարուայ նոյն ամսուան համեմատ 59,1 տոկոսով աւելի է: Իսկ այս տարուան Յունիսին հաւաքագրուած է 136 միլիարդ դրամ՝ նախորդ տարուան յունիսին համեմատ՝ 48,4 տոկոսով աւելի շատ:

Արդէն վեց տարի Հայաստան ապրող, այստեղ շինարարութեամբ ու փայտավերամշակմամբ զբաղող սուրիահայ գործարար Հրայր Ակիլեանի խօսքով՝ այնչափ կարեւոր է, որ կառավարութիւնն, ի վերջոյ, սկսած է ուշադրութիւն դարձնել փոքր պիզնեսին: Գործարարի գնահատմամբ՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի այդ ծրագիրը ողջունելի է:

«Եթէ խորքին նայինք, ամէնաճիշտ բանն է, որ տնտեսութիւնը փոքր եւ միջին պիզնեսին վրայ հիմնուած ըլլայ: 2008 թուականի միջազգային ճգնաժամն ազդեց այն երկիրներուն վրայ, որոնց տնտեսութիւնը մեծ պիզնեսներու վրայ հիմնուած էր: Բայց փոքր ու միջին պիզնեսի վրայ հիմնուած երկիրները չազդուեցին, օրինակ՝ Գերմանիան: Այդպէս ալ Հայաստանի մէջ պէտք է ըլլայ. եթէ կ'ուզենք երկիրն առաջ տանիլ, պէտք է զարգանայ փոքր եւ միջին պիզնեսը», - ըսած է սուրիահայ գործարարը:

## Փաշինեան եւ Սահակեան Քննարկած են Արցախեան Սահմանին Տիրող Իրավիճակը



Հայաստանի եւ Արցախի ղեկավարութեան հանդիպումը Ստեփանակերտի մէջ

Նախագահ Բակո Սահակեանը եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութեան մէջ քննարկած են պաշտպանութեան բանակի մարտունակութեան հետեւողական բարձրացման, Արցախի եւ Հայաստանի ռազմական փոխգործակցութեան եւ սահմաններուն վրայ տիրող իրա-

վիճակին վերաբերող հարցեր: Ըստ Ղարաբաղի նախագահի պաշտօնական կայքէջին, հանդիպման մասնակցած են Հայաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանը, ՀՀ Զինեալ Ուժերու գլխաւոր շտապի պետ Արտակ Դաւթեանը, Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարար Լեւոն Մնացականեանը:

## Վերաքննիչ Դատարանը Սերժանտ Եւրի Խաչատուրովի Բողոքը

Վերաքննիչ դատարանը մերժած է «Մարտի 1»-ի գործով մեղադրեալ, Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) գլխաւոր քարտուղար Եւրի Խաչատուրովի բողոքը՝ ուժի մէջ ձգելով առաջին ատենի դատարանի որոշումը:

«Ազատութեան» հետ գրոյցի ժամանակ անոր պաշտպան Միհրան Պողոսեանն ըսած է, որ Խաչատուրովին մեղադրանք առաջադրել է ետք նախաքննական մարմինը միջնորդութիւն ներկայացուցած էր առաջին ատենի դատարան՝ կալանաւորելու Խաչատուրովը: Բայց, ինչպէս փոխանցած է փաստաբանը, դատարանը գտած էր, որ իրեն հիմնաւոր կասկածներ, որ Խաչատուրովն առնչութիւն ունի իրեն առաջադրուած մեղադրանքի հետ:

Միեւնոյն ժամանակ, սակայն, դատարանը հիմնաւոր համարած էր անոր կալանքի տակ առնելու միջնորդութիւնը, բայց եւ որոշած 5 միլիոն դրամ գրաւի դիմաց անոր ազատ արձակել:

Փաստաբանի խօսքով՝ եթէ դատարանը կ'որոշէ, որ չկան մեղադրանքի վերաբերեալ հիմնաւոր կասկածներ, պէտք է մերժէ անոր կալանաւորելու միջնորդութիւնը, ոչ թէ կալանքը համարէ թոյլատրելի: Պողոսեանն ըսած է, որ իրենք վերաքննիչի մօտ բողոքարկած էին այս հանգամանքը:

«Մարտի 1»-ի գործով մեղադրեալի փաստաբանն ըսած է՝ դեռ չէ ստացած վերաքննիչի որոշումը եւ այն ստանալէ ետք պիտի յստակեցնէ՞ բողոքարկե՞լ վճռաբեկ ատեն, թէ՞ ոչ:

## Յայտարարուեցաւ «Սասնայ Ծռեր» Կուսակցութեան Ստեղծումը

«Հիմնադիր խորհրդարան»-ի քարտուղարութեան համակարգող Ժիրայր Սեֆիլեանն ու «Սասնայ ծռեր» խմբաւորման խօսնակ Վարուժան Աւետիսեանը մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարած են «Սասնայ ծռեր» անուամբ կուսակցութիւն ստեղծելու մասին:

2016-ին Ոստիկանութեան պարեկապահակէտային ծառայութեան (ՊՊԾ) գունդը գրաւելու մէջ մեղադրուող Վարուժան Աւետիսեանը, որ օրերս կալանքէն ազատ արձակուած էր, յայտարարած է, որ իրենք կը պատրաստուին մասնակցել արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն՝ դառնալով քաղաքական կեանքի առաջատար մասնակիցներէն մէկը:

«Հիմնադիր խորհրդարան կազմակերպութիւնը եւ «Սասնայ ծռեր» խմբաւորութիւնը նախաձեռնում են ստեղծել «Սասնայ

ծռեր» անուանմամբ քաղաքական կուսակցութիւն եւ մասնակցել Ազգային ժողովի առաջիկայ արտահերթ ընտրութիւններին, դառնալ քաղաքական կեանքի առաջատար մասնակից», - յայտարարած է ան:

Աւետիսեանը աւելցուցած է, որ նոր ստեղծուելիք կուսակցութիւնը ըստ էութեան պիտի չհանդիսանայ զինուած խումբի ժառանգորդը, եւ որ այդ խումբը ժողովուրդի իշխանութեան վերահաստատման ներկայիս պայմաններուն փակած է զինուած պայքարի էջը:

«Ազատութեան» հարցին, թէ ով պիտի առաջնորդէ կուսակցութեան ընտրացուցակը եւ արդեօք պիտի միանան այլ քաղաքական ուժերուն, այդ շարքին Նիկոլ Փաշինեանի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան, Վարուժան Աւետիսեանը դեռ յստակ պատասխաններ չէ տուած:

### Շրջանառութեան մէջ Դրուած է Մարտի 1-ի Տուժածներուն Փոխհատուցում Տալու Մասին Նախագիծը

Աժ պատգամաւորներ Լենա Նազարեանը եւ Ալին Սիմոնեանը շրջանառութեան մէջ դրած են «2008 թուականի Մարտի 1, 2-ին Երեւան քաղաքին մէջ տեղի ունեցած իրադարձութիւններու ժամանակ մարդոց կեանքին կամ առողջութեան պատճառուած վնասներու հատուցման մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի նախագիծը: Այս մասին ֆէյսպուքի իր էջին գրառում կատարած է Աժ «ԵԼՔ» խմբակցութեան պատգամաւոր Լենա Նազարեանը:

Գրառման մէջ, մասնաւորապէս նշուած է.

«Այս տարուայ փետրուարին Աժ-ում տեղի ունեցած «2008 թուականի Մարտի 1, 2-ի իրադարձութիւնների մասին» հանրային լսումների ժամանակ դեռ պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը պարտաւորուեց մշակել օրէնսդրական փաթեթ, որով

արժանապատիւ հատուցում կը տրուի Մարտի 1, 2-ի իրադարձութիւնների զոհերի հարազատներին: Նիկոլ Փաշինեանը չհասցրեց դա անել:

Այսօր Աժ պատգամաւոր Ալին Սիմոնեանը եւ ես շրջանառութեան մէջ դրեցինք «2008 թուականի Մարտի 1, 2-ին Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձութիւնների ժամանակ անձանց կեանքին կամ առողջութեանը պատճառուած վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի նախագիծը: Հատուցման գումարների չափը, ժամկէտը, վճարման կարգն ու պայմանները կ'որոշի կառավարութիւնը: Նախագիծը նպատակն է վերականգնել արդարութիւնը, պետական ինստիտուտների հանդէպ վստահութիւնը եւ հաստատել հանրային համերաշխութիւնը»:

### Գերմանիան Պատրաստ Աջակցիլ



Անկելա Մերքել Նիկոլ Փաշինեանի եւ Արմէն Սարգսեանի հետ՝ Դիւսսելտիմ քաղաքի վրայ

#### Շարունակուած էջ 1-էն

րաբերութիւնները կարելի է ալ աւելի խորացնել: Մենք քննարկեցինք նաեւ Գերմանիոյ մէջ ապաստան խնդրող հայաստանցիներու խնդիրը: Մենք այս ոլորտին մէջ բաւական լաւ կը համագործակցինք», - ըսած է Գերմանիոյ վարչապետը:

Անկելա Մերքել ուրախութիւն յայտնեց, որ Հայաստանը յաջողած է ԵՄ-ի հետ խորը եւ համապարփակ համաձայնագիր կնքել: Գերմանիան իր հերթին իր ներդրումը պիտի ունենայ համաձայնագրի կիրակման մէջ՝ հայկական կողմին օգնելու գործին մէջ», - ընդծած է վարչապետը:

Անդրադառնալով Արցախեան հիմնախնդրի կարգաւորման՝ Անկելա Մերքելը շեշտեց, որ Գերմանիան պատրաստ է նպաստել խնդրի խաղաղ կարգաւորման:

«Գերմանիան Միւսքի խումբի անդամ է: Լաւ կ'ըլլայ հակամարտութիւնները լուծել, բայց որ կարելոր է՝ լուծել լաւ միջոցաւորութիւններով: Գերմանիան պատրաստ է այս առումով աջակցիլ Հայաստանին», - ըսած է ան:

Իր կարգին վարչապետ

Փաշինեան յայտնեց, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետութեան Քանցլերի երբեք տեղի ունեցած այս առաջին այցը Հայաստանի Հանրապետութիւն պատմական կարելի է որակել:

«Ուրախ եմ, որ մենք տիկին Քանցլերի հետ շատ բովանդակալից քննարկումներ եւ բանակցութիւններ ունեցանք, որոնք վերաբերում էին Հայաստան-Գերմանիա, Հայաստան-ԵՄ յարաբերութիւնների հարցերին, միջազգային եւ տարածաշրջանային օրակարգի հարցերին: Ուրախ եմ արձանագրել, որ այդ օրակարգի բազմաթիւ հարցերի վերաբերեալ մեր տեսակէտները համընկնում են, ինչը եւս մէկ անգամ ցոյց է տալիս, որ մեր երկրների յարաբերութիւնները հսկայական ներուժ ունեն», - նշեց Փաշինեան:

Երեկոյեան, երկու երկիրներու վարչապետները եւ նախագահ Արմէն Սարգսեան այցելեցին Հիւսիսային պողոտայ, որ ոտքով քայլեցին, անակնկալի բերելով ժողովուրդին եւ լուսանկարուելով անոնց հետ:

Պողոտայի ճաշարաններէն մէկուն մէջ ընթրելէ ետք, Հայաստանի դեկավարները հրաժեշտ տուին Գերմանիոյ վարչապետ Անկելա Մերքելին:

### Քրեական Գործ «Վեոլիա Ջուր» Ընկերութեան Դէմ

«Վեոլիա Ջուր» ընկերութեան եւ Հանրային ծառայութիւնները կարգաւորող եանձնաժողովի նախագահ Ռոպերթ Նազարեանի հետ կապուած ոստիկանութեան դայթակղային բացայայտման դէպքի առթիւ յարուցուած է քրեական գործ առանձնապէս խոշոր չափերու կաշառք տալու եւ ստանալու համար:

Յարուցուած քրեական գործի նախաքննութիւնը կը վարէ Յատուկ քննչական ծառայութիւնը: Ծառայութեան մամուլ քարտուղար Մարինա Օհանջանեանն «Ազատութեան» փոխանցած է, որ որեւէ մէկուն դեռ մեղադրանք առաջադրուած չէ:

Շաբաթ օր՝ 25 օգոստոսին ոստիկանութիւնը հաղորդագրութիւն տարածած է՝ նշելով, թէ պարզած է, որ «Վեոլիա Ջուր»-ի կողմէն մատուցուող ծառայութիւններու սակագիրներու ճշգրտման 2017-2018 թուականներուն յայտը Հանրային ծառայութիւնները կարգաւորող յանձնաժողով ներկայացնելէն առաջ ընկերութեան տնօրէն Քրիսթիան Լըֆէն եւ գործառնական տնօրէն Գոռ Գրիգորեանը, կաշառք տալու դիտարկութեամբ եանձնաժողովի նախագահ Ռոպերթ Նազարեանին եւ Հանրային ծառայութիւնները կարգաւորող եանձնաժողովի եւս 7 պաշտօնատար անձերու համար «Վեոլիա Ջուր»-ի ֆինանսական ծախսային միջոցներէն գնած են Երեւան-Փարիզ-Երեւան ուղղութեամբ, ընդհանուր աւելի քան 4 միլիոն դրամի 8 օդանաւի տոմս, իսկ հիւրանոցի ծախսերուն համար փոխանցած են եւս 15 հազար եւրօ:

Ոստիկանութիւնը նշած է, որ



անկէ ետք Հանրային ծառայութեան կարգաւորման յանձնաժողովը խմելու ջուրի սակագիրը մօտ 11 դրամով բարձրացնելու որոշում կայացուցած է՝ 180 դրամէն 191.414 դրամ դարձնելով:

Վարչապետի կաշառակերութեան դէմ պայքարի գիծով օգնականի տրամադրած տուեալներու հիման վրայ ոստիկանութեան ձեռնարկած հետախուզական միջոցառումներու շնորհիւ պարզուած է, որ «Վեոլիա Ջուր»-ը շաբաթ մը շինարարական կազմակերպութիւններու հետ համաձայնութեան գալով, շուկայականէն անհամեմատ բարձր գիներով շուրջ 3 միլիոն 730 միլիոն դրամի պայմանագրեր կնքած է, որոնց կատարման շրջագիծէն ներս, յաւելագումներու, կեղծ կատարողական աքթեր կազմելու եւ այլ չարաշահումներ կատարելու եղանակով, իւրացուցած են առանձնապէս խոշոր չափերու գումարներ:

«Վեոլիա Ջուր» կը հերքէ ոստիկանութեան մեղադրանքը:

Նշենք, որ գայթակողութեան մէջ ներքաշուած Ռոպերթ Նազարեանի՝ որպէս ՀՍԿՀ (Հանրային ծառայութեան կարգաւորման յանձնաժողով) նախագահ պաշտօնավարման ժամկէտն աւարտած է այս տարուան 1 Յուլիսին:

### Հայաստանը Վեթո Պիտի Կիրառէ

#### Շարունակուած էջ 1-էն

սաստանեան եւ ատրպէյճանական լրատուամիջոցները, փորձագիտական հանրութիւնը, նաեւ երկու երկիրներու խորհրդարաններու պատգամաւորները, վերջին օրերուն կը քննարկեն ՀԱՊԿ-ին Ատրպէյճանի հնարաւոր անդամակցութեան հարցը:

Հակառակ ապրիլեան պատերազմին եւ Հայաստանի իշխանութիւններու՝ բարձրագոյն մակարդակով հնչեցուցած հրապարակային դժգոհութիւններուն, Երեւանի դաշնակիցներ համարուող Ռուսաստանն ու Պելառուսը կը հանդիսանան Ատրպէյճանին սպառնալիցութիւն վաճառող առաջատար երկիրներ:

Նշենք, որ ի սկզբանէ Ատր-

պէյճանը հինգ տարի անադամակցած է ՀԱՊԿ-ին նախորդած ռազմական դաշինքին: 1992-ի Մայիսին Ռուսաստանի նախաձեռնութեամբ յետխորհրդային շաբաթ մը երկիրներ (ներառեալ Հայաստանը) ստորագրած էին Հաւաքական անվտանգութեան պայմանագիրը: Ատրպէյճանը պայմանագրին միացած էր 1993 թուականի Սեպտեմբերին: Փաստաթուղթն ուժի մէջ մտած էր 1994-ի Ապրիլին, սակայն, երբ լրացած էր հնգամեայ ժամկէտը, Պաքուն այն չէր երկարաձգած՝ դուրս գալով Քրեմլի նախաձեռնած այդ դաշինքէն:

2002 թուականի Մայիսին նշուած պայմանագրի հիման վրայ ստեղծուած է Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութիւնը (ՀԱՊԿ):

### Թաթուլ Յակոբեանի Ելոյթը

#### Շարունակուած էջ 1-էն

շարժումին: Ան հետաքրքիր բացատրութիւններ տուաւ, թէ ինչպէս հնարաւոր եղաւ իշխանութեան անարիւն հեռացնել Սերժ Սարգսեանին, որոնք էին յեղափոխութեան հիմնական դերակատարներն ու խումբերը եւ ինչ մարտահրաւէրներու առաջ կանգնած է վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ ներքին եւ արտաքին ճակատներու վրայ:

Յակոբեանը պատասխանեց շուրջ 150 ներկաներու բազմապի-

սի հարցերու եւ սպա ներկայացուց իր եւ ԱՆԻ կեդրոնի վերջին հրատարակութիւնները, մասնաւորապէս Հնչակեան նշանաւոր գործիչ Ստեփան Սապահ-Գիւլեանի «Պատասխանատուները» գիրքը, Հայաստանի Հանրապետութեան առաջին վարչապետ Յովհաննէս Քաշազունիի երեք աշխատութիւնները, Հայաստանի երկրորդ վարչապետ Ալեքսանդր Խատիսեանի «Հայաստանի Հանրապետութեան Ծագումն Ու Զարգացումը եւ այլ հատորներ:

# Այ՛ Սա Նոր Հայաստանն է

ՊԱՆՈՒԻՏ

Թաւաշյա յեղափոխութեան բերկրանքը արտասահմանում զգացել էի, բայց չէի ապրել:

Արդէն Հայաստանում էի: Հեռուստատեսային կամ համացանցային լրատուամիջոցներից դուրս փորձում էի ժողովրդի տրամադրութիւնը տեսնել փողոցում: Ամենաճիշտ զարկերակը գտայ: Դա տաքու վարորդներ էին եւ շէնքերի բակերում տեղադրուած տաղաւարները կամ այսպէս կոչուած «բիսետկա»ները: Որտեղ անցուդարձերի մասին վերջին նորութիւնները համեմուած կիսակատակ կամ հայտնաբերուած երանգներով կարող ես լսել:

Բացի 88 թուի արցախեան ազատարկան շարժման եւ Հայաստանի անկախութեան սկզբնական տարիներից: Ձէի յիշում այդքան ուրախ եւ ապագայի նկատմամբ հաւատքով լի դէմքեր: Այդ ժամանակուայ յոգնած ու յուսահատ դէմքերը:

Ժպտում էին: Վարակիչ ուրախութիւն էր նշմարուում: Բողոքողներն էլ աւելի զուսպ էին: Ժանապարհային ոստիկանները աներեւակելիօրէն քաղաքավարի էին մօտենում: Եթէ կանգնացնում էին ապա մեծաւ մասամբ ուղղութիւն տալու եւ զգուշացնելու համար:

Մի օր հանգամանքների բերումով պէտք էր ցամաքային ճանապարհով ուղեւորուէինք հարեան երկիր: Մաքսային անցակէտում մաքսաւորի համագգեստով մի սիրունատես հայուհի էր նստած: Գերող պատշաճութիւն եւ ներդաշնակութիւն կար նրա զգեստի, վարուելաձեւի եւ ժպտի մէջ: Իմ հերթը հասաւ, իմ անցաթղթերը ստուգելիս նկատեցի երկար նայեց, ինչ որ բան նրան խանգարում էր առաջ անցնել եւ հաստատել: Ես էլ համոզուած էի այն բանում որ փաստթղթերս կարգին են: Ակամայից սկսեցի լարուել եւ նետարդանանալ: Ինչ է պատահել աղջիկ ջան: Ինչ որ բան էն չի, հարցրեցի նրան:

Աղջիկը հարցրեց, ո՞նց է որ ելքի այս կնիքը կայ բայց մուտքի կնիքը չկայ: Հարցը շփոթեցրեց ինձ: Յիշեցի որ անցեալ անգամ անձնագիրս նորոգելու ժամանակ նման խնդիր է առաջացել: Իրականութեան մէջ սա հարց է ոչ խնդիր: Ինչպէս ասում են, քանի որ տառապանքս փորձ ունի եւ ես երկար լուռելու հեռանկար էի տեսնում, ձեռքս կամացուկ տարայ

զրպանս ամերիկեան տուարը երբեմն աւելի արագ էր գործում: Բայց կայ. տեսայ աղջիկը իմ բացատրութիւնից չբաւարարուած օգնութեան կանչեց մի այլ սպայի: Ըստ երեւոյթին աւելի բարձր դասի:

Ես գիտէի որ նման պարագաներում երբ աւելի վերելից խառնուում են, գործը աւելի է բարդանում եւ «թանգանում»: Բայց տեղի ունեցաւ այն որ այս գրառումներին պատճառը դարձաւ: Աւագ սպան մօտեցաւ այդ գեղեցկուհու սեղանին, համակարգչային գնումները կատարեց մի կարճ հայեացք զցեց անձնագրիս ու ինձ: Գրիչը վերցրեց ու ստորագրեց եւ մեկնեց աղջկան:

Իմ ձեռքը դեռ զրպանումս էր: Աղջիկը ազատ շունչ քաշելով անցաթուղթը կնքել եւ ստորագրելուց յետոյ մեկնեց ինձ: Ես ձախ ձեռքով վերցրեցի եւ շնորհակալութիւն յայտնեցի: Աջ ձեռքս զրպանումս ակամայից թղթադրամն էր ճմրթում: Արագ կողմնորոշուել էր պէտք: Այս անգամ գումարը արդէն ոչ թէ որպէս կաշառք այլ որպէս շնորհակալութիւն, տալ թէ չտալ: Այս էր խնդիրը եւ շատ արագ լուծում էր պահանջում:

Որոշեցի չտալ, եւս մի անգամ խորին շնորհակալութիւն յայտնեցի եւ դուրս եկայ:

Տրամադրութիւնս բարձրացել էր ոչ այնքան էս յաջողութիւնից կամ փողի խնայողութիւնից, այլ այն բանից որ լուծումը գտայ, այն էլ արագ: Ինքս ինձ բարձրաձայն արտասանեցի «այ սա արդէն նոր Հայաստանն է»:

Երէկ Երեւանում ռեստորանի հաշիւը փակելիս մատուցողին կարգին նուէր էի տուել:

Հարց է առաջանում: Ինչո՞ւ մաքսայինին նուէր չտալ:

Պատասխանը. նախ մեծ հաշուով մատուցողին նուէրը կողուպիտոն սխեմա չի ձեւաւորում: Իսկ մաքսային տեսուչի կամ սպային տրուած կաշառքը կամ նուէրը կողուպիտոն սխեմա է ստեղծում: Այդ անմեղ թուացող գումարները վարից վեր շարժուելով դառնում են կատաղի եւ անգութ գումարներ: Ծնուած է կողուպիտոն համակարգը իր աւերիչ դրսեւորումներով:

Բացի դա մեծ հաւանականութեամբ մաքսային ծառայողները կարող է մերժէին «նուէրը»: Նոր խնդիրներ յառաջանար: Այ այդ ժամանակ կը զգայի «Նոր Հայաստանի» թաւշի համը:

# Բախում Բնապահպաններու եւ «Լիտիան Արմէնիա»-ի Ներկայացուցիչներուն Միջեւ



Կատարած ստուգումներէն ետք բնապահպանութեան եւ ընդերքի տեսչական մարմինը Բնապահպանութեան նախարարութեան առաջարկած անվաւեր ճանչնալ՝ 2016-ին հաստատուած պետական փորձաքննական եզրակացութիւնը եւ «Լիտիան Արմէնիա»-ին յանձնարարած է ձեռնպահ մնալ Ամուլսարի հանքավայրին մէջ ընդերքի օգտագործման հետ կապուած որեւէ գործողութիւն կատարելէ մինչեւ նոր փորձաքննութեան իրականացումը:

Միեւնոյն ժամանակ, ինչպէս կը հաղորդէ տեսչութիւնը, կառուցի ղեկավարը դիմած է Հայաստանի գլխաւոր դատախազին՝ խնդրելով պարզել, թէ արդեօք «Լիտիան Արմէնիա»-ի կողմէն առանց ընդերքի օգտագործման իրաւունքի լեւնային զանգուած արդիւնահանելու արարքին մէջ յանցակազմ կայ, եւ սահմանուած կարգով ընթացք տալու այդ հարցին:

Բնապահպանական ճակատի ներկայացուցիչները, որ ամիսներ շարունակ փակ կը պահեն Ամուլսարի հանքավայր տանող ճանապարհները, հաղորդած են, որ «Լիտիան»-ն այսօր առաւօտեան փորձած է իր աշխատակիցները մտցնել Ամուլսարի տարածք, սակայն իրենք թոյլ չեն տուած:

Ջերմուկի բնակիչ Վազգէն

Գալստեանն «Ազատութեան» փոխանցած է, որ միջադէպ արձանագրուած է «Լիտիան»-ի՝ Երեւանէն բերած ներկայացուցիչներու եւ ճանապարհը երեք ամիս փակ պահող քաղաքացիներուն միջեւ:

Ընկերութեան ներկայացուցիչները, ըստ Գալստեանի, իրենց ուղղութեամբ քարեր նետած են. - «Փորձում էին փրովկացիա (սաղրանք) անէին, որպէսզի յետագայում ոստիկանութիւնը զբաղուի մեզանով: Կարծում եմ, կը զբաղուի արդէն մեզնով, որովհետեւ ակրեսիւացանք (յարձակողական եղանք)... Իրենց յաջողուեց մեզ փակելու հանել, ու դրա պատճառով իրենք մի քիչ լուծուած վազելով փախել են հատեղից»:

Բնապահպանական ճակատի անդամ Լեւոն Գալստեանը շեշտած է, որ պէտք է պատասխանատուութեան ենթարկուին ոչ միայն «Լիտիան»-ի ներկայացուցիչները, այլեւ Հայաստանի մետաղական հանքերու շահագործման թոյլտուութիւն տուած պաշտօնեաները. - «Բոլոր պետական այն կառուցների ղեկավարները, միջին չինովնիկները, որոնք որ ստորագրել են որոշակի թոյլտուութիւնների, այլ աքթերի տակ... բոլոր հանքավայրերի հետ կապուած, յատկապէս թեղուտի,

Քաջարանի, պէտք է պատասխանատուութեան ենթարկուեն»:



**Ջօրացիկը  
Օժանդակելը  
Փրկելը**

Syrian Armenian Relief Fund  
P. O. Box 1948  
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org



LIFE INSURANCE    INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE    LONG TERM CARE    MEDICARE    DENTAL & VISION    DISABILITY




Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

**Bedros & Siamanto**  
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815  
MARONIANINSURANCE.COM

**(818) 500 9585**  
**(818) 269 0909**



# Պատմական Աղաւաղումներ Հայոց Պատմութեան Դասագրքերում

Շարունակուած էջ 7-էն

պարտում ու նգովում էր իր ամբողջ անցեալը, իր պայտերին ու սրբերին, իր հազարաւոր նահատակներին: «Մենք երեսուն տարի սխալուած էինք՝ մեզ թշնամի համարելով օսմանցիութիւնը, - գրում էր «Անկախ Հայաստանը»,- մինչդէռ մեր իսկական թշնամին ռուսն է եղել, որից ազատուելու համար մենք պիտի միանայինք թուրքերի հետ»:

III Դ.

238. Անկախ պետականութեան դրոյթը Դաշնակցութեան ծրագրում յայտնուեց շատ աւելի ուշ՝ անկախ Հայաստանի գոյութեան փաստից յետոյ: Ժողովրդին զինելն այդ շրջանում բացառապէս Հնչակեանների մենաշնորհն էր. ցաւօք, բազմաթիւ են ժամանակակիցների վկայութիւնները, որ Դաշնակցութիւնն այդ շրջանում ուղիղ հակառակն էր անում, որ յետոյ՝ ցեղասպանութեան շրջանում չարաչար անդրադարձաւ հայկական դիմադրութեան արդիւնաւետութեան վրայ»:

-Լեօ, «Անցեալից»

«Անկարող լինելով «Սակաւապետութեան» արարքը տանելու՝ Իտտի-հատի՝ համեմատաբար աւելի «սահմանադրասեր» անդամները հեռացան եւ կազմեցին առանձին կուսակցութիւն՝ Իթիլաֆ անունով: Իթիլաֆականութիւնը սկսեց ծաւալ առնել: Խորհրդարանական երկրորդ ընտրութիւնները մօտեցնում էին եւ Իթիլաֆը եւ Իտտիհատը պէտք է բախուէին իրար ամէն գնով: Հեղինակը պատմում է, որ Տաճկաստանի իրենց Վարիչ Մարմինը որոշել է յարաբերութեան մէջ էր մտել Հ. Յ. Դաշնակցութեան հետ:

Տեղի էին ունեցել «համերաշխական բանակցութիւններ» եւ որոշումներ էին կայացուել: Գործը գլուխ էր բերել Պարուսը՝ իրական ծագում ունեցող գերմանացի մի սոցիալիստ: Նա շատ մոտիկ էր Իտտիհատականներին. նրանց վստահութեան մարդն էր: Թղթակցում էր մի քանի թուրք պարբերականների: Սպասուելիք դժուարութիւնները հարթելու տեսակետից՝ Իտտիհատի եւ համերաշխող կողմերի միջեւ միջնորդի դերը Պարուսն էր ստանձնել: Պարուսը քարոզել էր համաձայնութիւն իրենց եւ Դաշնակցականների միջեւ:

Համաձայնութեան առաջին կէտն էր եղել այն, որ հայերին պիտի տային 20 երեսփոխան: Դաշնակցականները պահանջել էին 12-ը իրենց համար, իսկ Ս. Դ. Հնչակները դրել էին հաւասարութեան պահանջը: Վերջում որոշուել էր 9-ը՝ Դաշնակցական եւ 8-ը՝ Ս. Դ. Հնչակեան: Այստեղ կար 20 հայ երեսփոխանի եւ ինքնավար Հայաստանի խնդիր: Իտտիհատը մեղ օրերի մէջ էր. նա իր հետեւից էր արդէն քարշ տալիս Հ. Յ. Դաշնակցութեանը եւ այս անգամ էլ նրա միջոցով ուզում էր իրեն կապել եւ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեանը: Դա այն մեծ բարոյական հարուածն էր, որ Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը կարող էր ընդունել: Եթէ խզում առաջանար, պիտի ասուէր, որ դաշնակցականները համերաշխութիւն ուզեցին, ազգին 20 երեսփոխան տալու խոստում տուեցին, իսկ Ս. Դ. Հնչակեանները չուզեցին, նրանք համերաշխութեանը հակառակ գնացին եւ ազգը տուժեց: Պէտք էր իրականութիւնը բացայայտել:

Խնդիրը, փաստերը մի անգամ էլ ուսումնասիրուեցին Վարիչ Մարմնի լիակատար ժողովում եւ նրանց պաշտպանութիւնը յամոզուեց ընկեր Կօզիկեանին: Վերջին ժողովին, երբ ամեն բան պիտի վերջանար եւ Դաշնակցականները յաղթական հրճուանքի մէջ էին, ընկեր Կօզիկեանը, որպէս վերակրկնութիւն ասել էր, որ առանց երեսփոխանների թուի բաժանման մասին անդրադառնալու, նրանք պատրաստ են համաձայնագիր ստորագրել եւ կ'ուզէին տեսնել Իտտիհատի Կենդանական Վարչութեան կողմից գրուած եւ կուսակցութեան կնիքով կնքուած թուղթը: Եւ այսպէս հարցը վերջացաւ, որովհետեւ Իտտիհատը երբեք այդպիսի թուղթ եւ դաշինք չէր ստորագրի: Այսպէս Իտտիհատը այս անգամ էլ ձեռնունայն դուրս եկաւ:

Սրանից յետոյ, ձեռք առան Իթիլաֆի հետ համագործակցութեան գործը: Այդ լուրջ խնդրի շուրջ Տաճկաստանի Վարիչ Մարմինը մի քանի երկարատեւ նիստեր անցկացրեց: Իտտիհատը՝ տաճիկ ազգայնականութիւնը՝ կացութեան լիազօր տէրն էր: Նա իր ձեռքին ուներ երկրի ամբողջ իշխանութիւնը: Հայաստանը արիւնալից օրեր էր բոլորում: Յափշտակութիւնները, առեւանգումները, խմբային մասնակի կոտորածները դարձել էին պարբերական ու մտել էին կեանքի սովորական ընթացք: Հայ օրինական հաստատութիւնները՝ Պատրիարք, Քաղաքական Ժողով, յաճախ ներկայացան, թախանձագին աղաչեցին, եղած կոտորածների վրայ իշխանութեան ուշադրութիւնը հրաւիրեցին, բայց դրանք հետեւանք չունեցան: Հեղինակը ասում է, որ իրենք Իթիլաֆին չպէտք է մօտենային նրան համագործակցելով՝ Պետական իշխանութեան մէջ նուաճումներ կատարելով, արդիւնաւետ պաշտօններ ձեռք բերելով: Նրանք պէտք է Իթիլաֆին մօտենային՝ որպէս Իտտիհատի մի թուրք իսլամ ախոյեանի, եւ նրան աջակցեցին, որպէսզի բախումը աւելի ուժեղ, յարատեւ լինէր, կամ թուրքիան ճշմարիտ սահմանադրական երկիր դառնար, եթէ կարող էր, եւ նրանք կարողանային ազատ, ապահով կերպով ապրել որպէս ազգ, որպէս քաղաքացի:

Շուտով կնքուեց այն համաձայնագիրը, որը Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան պատմութեան կոթողներից մէկը կը մնայ: Հնչակեանների օգնութեամբ թէ մայրաքաղաքի, եւ թէ գաւառների շատ տեղերում Իթիլաֆը կարողացաւ մասնաճիւղեր հաստատել: Դրանք Իտտիհատի դէմ կռուող ուժեր, հակաիտտիհատական կայաններ էին: Նրանք նաեւ հաւաքեցին ռամկավարների գլխաւոր անդամներին, եւ առաջարկեցին, որ նրանք էլ բաժին ստանձնեն հայ ժողովրդին զինելու գործի մէջ: Նրանք հրաժարուեցին՝ ասելով, որ իրենք գտնուում էին սահմանադրական մի երկրի մէջ եւ չէին կարող այդպիսի վտանգաւոր քայլ անել: Նրանք համամիտ էին հակաիտտիհատական ուղղութեան պայքարին, սակայն չէին համարձակուում հրապարակապէս դիրք բռնել: Առաջարկեցին առանձին կամ միասին աջակցել Իթիլաֆին: Այսպիսով, հնչակեանները ճանաչեցին Հայ ազգի թշնամուն, չափեցին, կշռեցին Իտտիհատին եւ, իրենց ձեռքից ինչ կգար, չխնայեցին, աշխատեցին նրան թուլացնել: Նրանք արեցին այն, ինչ կարող էին: Ս. Դ. Հնչակցութիւնը իր պարտականութիւնը կատարեց: Գործը, որ նրանք արեցին, ամենելին համապատասխանում էր իրերի բնոյթին եւ պատմութեան պահանջին:

-Ստեփան Սապահգիւլեանի «Պատասխանատուները»-ից:

էջ 124. «Կ. Պոլսի կենտրոնական հրապարակներից մէկում 1915 թ. Յու-

նիսի 15ին կախաղան բարձրացուեցին Հնչակեան կուսակցութեան 20 գործիչներ՝ Փարամազի գլխաւորութեամբ»:

Եւ ոչ մի բացատրութիւն չկայ, թե ինչու եւ ինչ գործով են բարձրացուել կախաղան: Հայոց պատմութեան մի ամբողջ հերոսական շրջան ընդամենը երկու անբովանդակ տողում:

Հայոց պատմութիւն, 8-րդ դասարան, (Երաշխաւորուած է ՀՀ ԿԳՆ կողմից), Երեւան, «Մանճար», 2013թ. խմբագրութեամբ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Բարխուդարեանի, հեղինակներ՝ Վ. Բարխուդարեան, Պ. Չոբանեան, Ա. Խառատեան, Է. Կոստանդեան, Ռ. Գասպրեան, Ռ. Սահակեան, Ա. Հակոբեան:

էջ 108. «Հայապահպանութեան եւ եկեղեցու ունեցուածքը վերադարձնելու խնդրում ակտիւ գործունեութիւն ծաւալեցին հայ ազգային կուսակցութիւնները, մասնաւորապէս Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը եւ Սոցիալ-Դեմոկրատական կուսակցութիւնները»:

Սոցիալ դեմոկրատական կուսակցութիւնները: Քանի՞սը գիտե՞ք Հայ իրականութիւնում տուեալ ժամանակաշրջանում: Տողերի գրուած քից այնպէս է հասկացուած, որ դրանք մի քանիսն էին:

Միակ սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը Հայ իրականութիւնում այդ ժամանակ հանդիսանում էր Հնչակեան կուսակցութիւնը, որին զուգահեռ կային սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւններ, բայց ոչ կուսակցութիւններ, եւ այդ կառույցները չունէին անհրաժեշտ ուժը:

«Ահա այդ ժամանակ էր, որ Դաշնակցութիւնը յայտարարեց, թէ իր վրայ է վերցնում ինքնապաշտպանութեան եւ դիմադրութեան գործը: Ժամանակին արուած մի քայլ էր այդ, որ միաժամանակ լուծում էր Դաշնակցութեան լինել-չլինելու հարցը: Ցարական զօրքերը քաղաքից քաղաք, աւանից աւան էին գնում, կոտորում էին ժողովրդական կարողութիւնները իրենց մեջ պահող սնդուկները, տանում նրանց մէջ եղած գումարները, իսկ ժողովուրդն իր գայրոյթն ու վիշտը մոռացնել էր տալիս նրանով, որ փարում էր Դաշնակցութեանը, որի ռազմական ուժերը մտնում էին գործի մեջ՝ տեռորի ենթարկելով կառավարական պաշտօնեաներին՝ սկսելով Գանձակի փոխնահանգապետից:

Ցարական ոճիրի մի երեսն էր սա՛ Հայոց հարց նաեւ Ռուսաստանում, [ինչպէս նաեւ] ժողովրդական համակրանքով վերակենդանացած, ուժեղացած, հայ յեղափոխական իրականութեան տէր ու հրամայող դարձած Դաշնակցութիւնը...»

Թէեւ այսպիսին էր ստեղծուող նոր դրութիւնը, բայց հնչակեանները մի անգամ էլ էին երեւան գալիս յանդուգն ձեռնարկութիւններով. նրանք էին, որ 1903-ի աշնանը սպանութեան փորձ կատարեցին կառավարչապետ Գոլիցինի վրայ: Փորձն անյաջող էր: Ցարական սատրապը չսպանուեց, այլ վիրաւորուեց գլխից: Այնուհետեւ այլեւս բացարձակ պատերազմական դրութիւն ստեղծուեց միապետական բիւրոկրատիայի եւ հայ ժողովրդի միջեւ: Հալածանքներն ընդունեցին համաձայն կատարող կերպարանք: Թիֆլիսում ամբողջ թաղեր ենթարկուեցին գիշերային խուզարկութիւնների, հարիւրավոր մարդիկ, սոսկ կասկածով միայն, աքսոր քշուեցին Ռուսաստան»:

-Լեօ, «Անցեալից»:

(Շարունակելի)

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:----- Email:-----



## Angela Merkel Praises Armenia Pledges to Help Yerevan Implement CEPA Agreement with EU



YEREVAN — German Chancellor Angela Merkel praised Armenia on Friday for developing relations with the European Union while remaining allied to Russia during her first-ever official visit to the South Caucasus

country. “Armenia is a good example of how one can simultaneously cooperate with Russia and the European Union,” she said after talks with Prime Minister Nikol Pashinyan.

Merkel arrived in Yerevan as part of a regional tour four months after Pashinyan-led mass protests brought down Armenia’s previous government. Pashinyan’s press office quoted her as saying at the start of the talks that the “big changes” were unexpected to the German government and “positive” for Armenia.

“Our relations are very good but can deepen further,” Merkel told an ensuing joint news conference with the Armenian premier. She said Germany would specifically welcome closer commercial and cultural ties with Armenia.

Merkel also pledged to help Yerevan implement its landmark Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA) with the EU signed last November.

Pashinyan said that just like the former Armenian government his ad-

Continued on page 2

## Pashinyan and Sahakian Discuss Strengthening Karabakh Army

STEPANAKERT (RFE/RL) — Prime Minister Nikol Pashinyan has visited Nagorno-Karabakh and met with its leaders for a third time since taking office more than three months ago.

Pashinyan was accompanied by Armenia’s Defense Minister Davit Tonoyan and the chief of the Armenian army’s General Staff, General Artak Davtian, during the low-key visit. The three men met twice on Sunday with Bako Sahakian, the Karabakh president, and General Levon Mnatsakanian, the commander of Karabakh Defense army. Pashinyan’s press service issued no statements on the trip.

According to Sahakian’s office, the first meeting focused on “various issues relating to cooperation between

Continued on page 3

## “Armenia After the Velvet Revolution” A Talk by Tatul Hakobyan at Glendale Central Library



GLENDALE -- Armenian reporter and analyst Tatul Hakobyan gave a talk on current Armenian events at the Glendale Central library on August 24 as part of tour to various venues in several Armenian-American and Armenian-Canadian communities, including San Francisco, Toronto, Chicago, Washington DC, and Fair Lawn (NJ).

The event at the Glendale Central library was organized by Nor Serount Cultural Association.

Hakobyan spoke clearly in Armenian in an informal and lively fashion. He prefaced his talk by proclaiming that he was an independent journalist without ties to any political parties or the Armenian government.

The talk, followed by a discussion and Q&A, analyzed the latest political developments in Armenia that resulted in the so-called “Velvet Revolution” led by Nikol Pashinyan. The

revolution brought about the resignation of newly-elected Prime Minister Serzh Sargsyan, who had already served two terms as Armenia’s President, and his replacement by Pashinyan.

Hakobyan analyzed the following questions:

-What were the causes of this unexpected revolution?

-What has been achieved over the past hundred, or so, days?

-What are the prospects for Pashinyan’s success in the coming legislative elections?

-Is a counter-revolution that would bring back the kleptocratic, authoritarian leadership of the previous regimes still possible.

The lecture and Q&A session followed by a presentation of Hakobyan’s and his ANI Armenian Research Center’s new books.

## Turkish Police Assault Garo Paylan and Arat Dink During “The Saturday Mothers” Weekly Protest



ISTANBUL (Civilnet.com) — On Saturday, August 25, several protesters, including some notable Armenians, were detained by police in Istanbul. The event took place near the Galatasaray Lise, on Istiklal Avenue in Istanbul’s Beyoglu District. The site has been the venue for weekly gatherings by a group called “The Saturday Mothers.” Their 30-minute gathering every Saturday, at noon, has been in remembrance of their family members who were disappeared 20-30 years ago as a result of police action.

This week was the 700th such gathering. Perhaps coincidentally, perhaps not wanting larger crowds to gather, the authorities had indicated that the gathering would no longer be allowed. In response, an even larger number of protesters appeared, among

them Member of Parliament Garo Paylan, Arat Dink, an architect and the son of slain journalist and activist Hrant Dink, and Rober Koptas, Editor in Chief of the Aras Publishing House, and formerly editor of the Agos daily newspaper.

Nearly four dozen people — mostly relatives of those who had disappeared — were detained then released after several hours. Among those detained was Rober Koptas. In Turkey’s current political climate of increased authoritarianism, social media was full of comments and photos including this one by Vedat Arik, which captures the visceral response of the crowd in trying to protect Arat Dink, and prevent his detention. Dink was

Continued on page 3

## Armenian Police Forces Deployed on Azeri Border



YEREVAN — The first large group of Armenian interior troops joined army units in guarding Armenia's border with Azerbaijan on Thursday as part of an unprecedented redeployment ordered by the new government.

They headed to some sections of the heavily militarized border immediately after a farewell ceremony in Yerevan attended by Prime Minister Nikol Pashinian and other senior officials.

The troops that are part of the national police service have until now been tasked with only ensuring internal security and dealing with violent unrest in the country. Pashinian ordered them to also protect the Armenian-Azerbaijani frontier on a rotating basis shortly after

coming to power in May.

Speaking at the ceremony, Pashinian described their new mission as “historic,” saying that they will not only help the Armenian military but also improve their public image. “Our objective is to ensure that Armenia's citizens perceive the police and the police troops as protectors of their security, Armenian statehood and the constitution,” he said.

The Armenian police chief, Valeri Osipian, said earlier this week that police personnel will serve at the border on two-week tours of duty and receive additional payments for that. They look forward to their new task, Osipian told reporters.

## Armenian-Chinese Friendship School Opens in Yerevan



YEREVAN—Armenian-Chinese friendship school constructed by the government of China opened in Yerevan on August 22. The opening ceremony was attended by Prime Minister Nikol Pashinian, Ambassador of China, Armenia's Minister of education and dignitaries.

After the ribbon cutting of the school Armenian Prime Minister Pashinian said the teaching of Chinese will create great opportunities for the school children.

“The knowledge of Chinese opens an opportunity to access to large layer of the history of humanity and civilization and huge information. I hope that this school will become a channel through which the Armenian people will be more informed about the great influence China and the Chinese civilization had on the humanity development”, the PM said.

Teachers from China will be in-

vited to the school for organizing the study process.

China's Ambassador to Armenia Tian Erlong said the school is an evidence of the Armenian-Chinese good relations.

Ըստ վատիկանի կայքէջին Արեւելեան Եկեղեցիներու Ժողովի գլխաւոր պարտականութիւններէն կը սեպուին Սբ. Աթոռի՝ Արեւելքի Կաթողիկէ դաւանանք ունեցող Եկեղեցիներու հետ յարաբերութիւններու մշակումն ու զարգացումը՝ ծիսական, դաւանական եւ կազմակերպչական հարցերու առնչութեամբ, միաժամանակ յարգելով անոնց աւանդութիւններն ու ինք-

### «ՄԵՐ ՏՈՒՆԸ ԾԱԽՈՒ ՉԷ՝»

Շարունակուած էջ 14-էն

նավարութիւնը՝ *Sui Juris* իրաւական հասկացողութեան հիման վրայ: Ծիրանաւոր (Կարդինալ) Լէօնարտո Սանտրի այս ժողովի նախագահն է, եւ Արեւելեան Եկեղեցիներուն պատկանող 23 Պատրիարքներուն հետ համախորհուրդ եւ գործակցաբար կը համադրէ այդ ժողովի աշխատանքները եւ որոշումները: Այս մարմինն մաս կը կազմեն, ի միջ այլոց, Հայ Կաթողիկէ Համայնքի Պատրիարք-Կաթողիկոսը, Մարոնի Համայնքի Պատրիարքը, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի եւ Անատոլի տիտղոսակիր Ասորի Կաթողիկէ Համայնքի Պատրիարքը: Արեւելեան Եկեղեցիներու ժողովի իրաւասութիւնները կը տարածուին նաեւ Արեւելքի Եկեղեցիներուն պատկանող միաբանութիւններուն վրայ, ներառեալ Մխիթարեան Միաբանութիւնը:

Նկատի առնելով Արեւելեան Եկեղեցիներու ժողովի գործունէութեան դաշտը, եւ այդ ժողովի մասնակից անդամներու դերը Լիբանանի եւ Միջին Արեւելքի Քրիստոնեայ Համայնքներու կեանքին մէջ, հաւանաբար Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան ֆինանսական տագնապը եւ լուծումի մը հաւանական տարբերակները քննութեան եւ քննարկման նիւթ եղած են այդ մարմինի զանազան անդամներուն միջեւ իրենց հերթական ժողովներուն կամ երկողմանի հաղորդակցութիւններու ընթացքին: Քննարկուած լուծումի տարբերակներէն մին այնպէս կը թուի թէ յանգած է Լիբանանի մէջ գտնուող եւ իբրեւ Վիեննական Մխիթարեան Երկրորդական Վարժարան ճանչցուած հաստատութեան հողատարածքի եւ անշարժ կաշքերու վաճառքի որոշումին՝ թէթեւցանելու համար Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան պարտքերը եւ այս ձեւով գոհացում տալու պարտատէրերու պահանջքին: Զարմանալի այն է որ այս «խորհրդակցութիւններուն» իբրեւ արդիւնք Ասորի Կաթողիկէ Եկեղեցու Պատրիարք Իզնատիոս Եփրեմ Յովակի Գ. Եունան (Ignatius Ephrem Joseph III Younan) յանկարծակի եւ անակնկալ կերպով կը յայտնուի իբրեւ առանձնաշնորհեալ եւ նպաստաւորեալ կողմ այս գործառնութեան մէջ ... աջակցութեամբ Արեւելեան Եկեղեցիներու ժողովի նախագահ Ծիրանաւոր (Կարդինալ) Լէօնարտո Սանտրիի: Վերջինս գործակատար Հայր Մօրո Մաքարինէլլի (Pfrre Mauro Macarinelli) միջոցով ամէն ջանք կը թափէ ու ճնշում կը բանեցնէ վարժարանի Տնօրէնութեան վրայ, որ այդ կալուածը եւ շէնքերը անմիջապէս յանձնուին Ասորի Եկեղեցու Պատրիարքութեան:

Անկախ այն հանգամանքէն թէ ո՛չ մէկ ատեն Հազմիէի Վիեննական Մխիթարեան Երկրորդական Վարժարանի 10,000 քառակուսի մեթր հողատարածքը իր շէնքերով եւ անշարժ կաշքերով պաշտօնապէս վաճառքի հանուած էր, Անտիօքի Ասորի Կաթողիկէ Համայնքի Պատրիարքարանին անօրինակ ջանքը տիրանալու այդ յիշեալ հողատարածքին առանց առեւտրական մրցակցական պայմաններու սահմանումին գայթակղեցուցիչ եւ գայթակղալիք երեւոյթ մը կը հանդիսանայ: Նոյնքան գայթակղեցուցիչ է այն պարագան

որ Ասորի Պատրիարքարանը կը ջանար հայ ժողովուրդի կրթական պէտքերուն պատկանող կալուածի մը տիրանալ՝ վճարումի անկարողութիւնը: Ըստ լաւատեղեակ աղբիւրներու այդ հողատարածքի ներկայ շուկայական փոխարժէքը կը գնահատուի 40-էն 50 միլիոն ամերիկեան տոլարի, մինչդեռ Ասորի Պատրիարքարանը այդ հողատարածքին կը փորձէր տիրանալ՝ վճարելով միայն 8 միլիոն ամերիկեան տոլարի գումար մը: Թէ այդ գումարը ինչպէս պիտի թէթեւցնէր Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան պարտքերը անկասկած բացատրութեան կը կարօտի Արեւելեան Եկեղեցիներու ժողովի պատասխանատուներուն կողմէ:

Վարժարանի հողատարածքի եւ շէնքի ծրագրեալ վաճառքի լուրը խոր յուզումի կը մատնէր Հազմիէի Վիեննական Մխիթարեան Վարժարանի ներկայ եւ անցեալի սաները, ուսուցչական կազմն ու տնօրէնութիւնը ինչպէն նաեւ Հայեցի կրթութեան ներկայով եւ ապագայով մտահոգ շրջանակներն ու Մխիթարեան անունին, աւանդին եւ վաստակին համակիր ու բարեկամ անձեր: Աշխարհասփիւռ Մխիթարեան նախկին սաներ այս հարցով բողոքի նամակներ կը պատրաստէին եւ կ'ողողէին Արեւելեան Եկեղեցիներու ժողովի Նախագահ Ծիրանաւոր (Կարդինալ) Լէօնարտո Սանտրիին պահանջելով որ յետս կոչուի վաճառքի որոշումը: Այդ նամակներու առաջինը կը դրկուէր 29 Հոկտեմբեր 2015 թուականին հեռուոր Արժանիքի մայրաքաղաք Պուէնոս Այրեսէն՝ հոն գործող եւ պաշտօնավարող Մխիթարեան սաներու անունով Միաբանութեան կը կազմուէր «Փրկենք Մխիթարեանը» կոչուած մարմին մը որ կը փորձէր արգելք հանդիսանալ ծրագրեալ վաճառքին: Լիբանանեան Ֆրանսատառ «Լ'Օրիան-Լը ժուր» օրաթերթի 14 Սեպտեմբեր 2015 համարին մէջ Մխիթարեան սաներու ստորագրութեամբ լոյս կը տեսնէր յօդուած մը բացատրելով այս վաճառքի մտահոգիչ պարագաները եւ հետեւանքները: Միաբանակալ աւելի քան հինգ հարիւր ստորագրութիւն հաշուող ֆրանսերէն ինտերակուր մը կը շղուէր նաեւ 16 Դեկտեմբեր 2015 թուականին Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանսիսկոս Պապին կոչ ուղղելով անոր որ արգելք հանդիսանուէր այս վաճառքին՝ պահպանելու եւ ապահովելու Մխիթարեան Վարժարանի հայկական դիմագիծը: Մխիթարեան սաներու անունով նամակ մըն ալ կը դրկուէր Պատրիարք Իզնատիոս Եփրեմ Յովակի Գ. Եունանի (Ignatius Ephrem Joseph III Younan) դիպուկ բացատրութեամբ յայտնելով անոր որ «Մեր Տունը Ծախու Չէ՛»:

Իր կարգին Մեծը Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ Արամ Ա. ընդունելով Վիեննական Մխիթարեան Հայրերու պատուիրակութիւն մը Անթիլիասի Կաթողիկոսութեան Դիմատետրի էջին վրայ արձագանգ կը հանդիսանար Հազմիէի Մխիթարեան վարժարանի դպրոցի շուրջ ստեղծուած տագնապին, եւ 17 Ապրիլ 2018 թուագրուած տեղադրումով կը յայտարարէր: «Հայ դպրոցի մը փակումը վնաս մըն է Հայ ժողովուրդի ինքնութեան պահպանման»:

**ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ: ՊԱՊԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ**  
(1 Յունիս 2016- ցարդ):

Թէ անմիջական ինչ ազդեցութիւն կամ հետեւանք ունեցան Մխիթարեան սաներու բողոքի այս արտայայտութիւնները վատիկանի Սբ. Աթոռին մօտ կարելի չէ յստակօրէն կամ առարկայական կերպով վկայելու: Սակայն այս հարցով նշանակելի գարգացում մը կ'արձանագրուէր այդ շրջանին: Արդարեւ , այս խնդրագիրներու առաջումէն մի քանի ամիս անց «30 Ապրիլ 2016 թուակիր վճռագրով Ն.Ս. Ֆրանսիսկոս Պապը Մխիթարեան Միաբանութեան համար Պապական Պատուիրակ կը նշանակէր, լիազօր իրաւասութիւններով , Պոլսոյ Հայ Կաթողիկէ թեմի առաջնորդ գերպ. Լեւոն Արք. Զէքիեանը: Պատուիրակի իրաւասութիւնները լրիւ ի գօրու կը դառնային, ստորագրութեան իրաւունքով նաեւ քաղաքական ատեաններու անջեւ 1 Յունիս 2016 թուականին սկսեալ» (տե՛ս Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան Դիւանի 31 Մայիս 2016 Հաղորդագրութիւնը): «Նորակոչ պաշտօնավար սրբազանը միաբանութեան առօրեայ ընթացիկ գործերուն տնտեսման համար, իբրեւ իր ներկայացուցիչները նշանակած է Ս. Ղազարու մայրավանքին , եւ առ հասարակ միաբանութեան համար, նախկին ընդհանուր աբբայ Եղիա վրդ. Քիլոյպեանը, իսկ Վիեննայի մենաստանին համար նախկին աբբայ Պողոս վրդ. Գոճանեանը»:

Այս հաղորդագրութիւնը սակայն ո՛չ մէկ բացատրութիւն կու տար թէ ինչ էին Պապական Պատուիրակի իրաւասութիւնները, թէեւ մանրամասնօրէն հոն կը նշուէին այն նիւթական եւ առաքելական դժուարութիւնները գործ Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնը կը դիմագրուէր երկար ժամանակներէ ի վեր: Այդ հաղորդագրութեան ընթերցումէն կը հետեւցուէր թէ Հազմիէի Վիեննական Մխիթարեան Երկրորդական Վարժարանի հողատարածքի վաճառքը «լուծեան» յետս կոչուած է, թէեւ վարագոյրի ետին Ասորի Կաթողիկէ Պատրիարքարանը անդու կերպով, եւ նոյն շահադիտութեամբ, կը հետապնդէր ու կը շարունակէ հետապնդել նախապէս օտար կողմերու «համաձայնութեան» արժանացած կարգադրութեան գործնականացումը:

Միաբանական հայ մամուլին մէջ լոյս կը տեսնէր Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան Դիւանի 2 Ապրիլ 2018 թուակիր հաղորդագրութիւնը ուր կ'ընտելէր: «... Անցնող տասը ամիսներու ընթացքին տեղի ունեցած է պարտքերու նուազում մը թէ՛ որոշ նուիրատուութիւններու շնորհիւ եւ թէ՛

վաճառումով երկար ժամանակէ ի վեր լքուած ու ներկայ միջոցներով շահագործումը անկարելի դարձած ինչ-ինչ դատարկ տարածքներու»:

Ուրեմն քառասուն տարիներ Վենետիկի Մխիթարեան պարտքերը անլոյժ մնալէ ետք, Պապական Պատուիրակը նշանակումէն 10 ամիսներ ետք Մխիթարեան Միաբանութիւնը կը յաջողէր բարւօք լուծում մը գտնելու իր ֆինանսական տագնապին եւ գլխացաւերուն առանց օտար միջամտութեան: Հետեւաբար, Հազմիէի Մխիթարեան Երկրորդական Վարժարանի կալուածին շուրջ ստեղծուած այդ անօրինակ տակնուվրայութիւնը բնական կերպով պէտք է վերջ գտներ այս դրական գարգացումներու շնորհիւ: Վերոյիշեալ հաղորդագրութեան հրապարակումէն հազիւ մէկ ամիս անց Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան անդամ եւ «Լիբանանի եւ Միջին Արեւելքի Միաբանութեան մեծաւոր Հ. Մեքոպթ. Մ. Վրդ. Սիլվահանի» ստորագրութեամբ 4 Մայիս 2018 թուականին Լիբանանահայ մամուլին մէջ լոյս կը տեսնէր նոր հաղորդագրութիւն մը ուր կ'ըսուէր (տե՛ս ԱԶԴԱԿ օրաթերթ 4 Մայիս 2018, ԱՐԱՐԱՏ եւ ԶԱՐԹՕՆՔ օրաթերթեր 7 Մայիս, 2018): «Մխիթարեան Վարժարանի վաճառուելու լուրը անհիմն է: 2018-2019 տարեշրջանին կը սկսի իր վերամուտը իր նոր եւ ժամանակակից վարժարանին մէջ՝ Ռաուտայ»: Հաղորդագրութիւնը անգամ մը եւս կը պնդէր որ «Մխիթարեան Վարժարանը ո՛չ պիտի փակուի, ո՛չ ալ հողատարածքը վաճառքի է: Այդ տարածաշրջանում թէ ինչ էին Պապական Պատուիրակի իրաւասութիւնները, թէեւ մանրամասնօրէն հոն կը նշուէին այն նիւթական եւ առաքելական դժուարութիւնները գործ Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնը կը դիմագրուէր երկար ժամանակներէ ի վեր: Այդ հաղորդագրութեան ընթերցումէն կը հետեւցուէր թէ Հազմիէի Վիեննական Մխիթարեան Երկրորդական Վարժարանի հողատարածքի վաճառքը «լուծեան» յետս կոչուած է, թէեւ վարագոյրի ետին Ասորի Կաթողիկէ Պատրիարքարանը անդու կերպով, եւ նոյն շահադիտութեամբ, կը հետապնդէր ու կը շարունակէ հետապնդել նախապէս օտար կողմերու «համաձայնութեան» արժանացած կարգադրութեան գործնականացումը:

Այս հաղորդագրութեան համաձայն Հազմիէի Մխիթարեան վարժարանը «կը փոխադրուէր» Պէյրութի մօտակայ արուարձան Ռաուտայի շրջան, նոր տնօրէնութեամբ եւ ուսուցչական կազմով: Նոյնպիսի բովանդակութեամբ, բաց այս անգամ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան Դիւանին կողմէ անթուակիր հաղորդագրութիւն մըն ալ լոյս կը տեսնէր Լիբանանահայ Մամուլին մէջ 1 Օգոստոս 2018 թուականին ուր անգամ մը եւս կը շեշտուէր թէ Մխիթարեան Վարժարանը կը փոխադրուէր Ռաուտա եւ թէ Հազմիէի հողատարածքը ծախու չէր: Հաղորդագրութեան մէջ սակայն աչքի կը զարնէին հետեւեալ երկու պարբերութիւնները:

(Շարունակելի)

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ**  
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԳՈԳԻ ԸՆՍԱՐ)  
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՆՍԱՐ**  
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
**ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

## ԶՍԻԻՆԻՈՅ 1922 ԹՈՒԻ ԱՂԵՏԸ Ս. Ստեփաննոս Մայր Եկեղեցիին Վախճանը Ղեւոնդ Եպիսկոպոս Դուրեանի Օրագիրէն

«Զմիւռնիոյ հայոց Ս. Ստեփաննոս տաճարը իր հսկայ եւ հոյակապ կառուցուածքով, իր միակտուր սիւներով, իր գեղակերտ գմբէթով ճարտարապետական գլուխ գործոց մըն էր: Տաճարը շրջապատուած էր եկեղեցապատկան շէնքերով եւ ամրաշէն պատերով»

ՂԵՒՈՆԴ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ, Առաջնորդ

**ԴՈՎՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ**

**Յոյն եւ Թուրք հակամարտութիւն**

1915-ի Յեղասպանութեան ատեն Զմիւռնիա եւ շրջանի հայութիւնը գերծ մնաց ընդհանուր կոտորածներէ շնորհիւ քաղաքի եկեղեցական եւ ազգային կեդրոնական վարչութեանց զգոյշ եւ խոհեմ քաղաքականութեան գլխաւորութեամբ թեմակալ Առաջնորդ Մատթէոս Եպիսկոպոս Ինճէեանի: Կացուցեցին սակայն տարբեր եղաւ եւ շատ ողբերգական 1919-1922-ի յոյն ընդդէմ թուրք պատերազմէն ետք: 1922-ի գարնան Եւրոպայի դաշնակից տէրութիւնները ջանացին հաշտութիւն գոյացնել յոյներու եւ թուրքերու միջեւ, սակայն յոյներն որ բարդութիւն յարուցին Զմիւռնիոյ շրջանը ինքնավար հռչակելով եւ Իոնիոյ բնակչութեան պաշտպանութեան նախաձեռնելով:

Այդ նպատակով յոյն պետութիւնը 25,000 զինուոր ցամաք հանեց Ռոտտոթոյի մէջ, եւ յետոյ արեւելեան թուրքիոյ մէջ կեդրոնացուց 42,000 զօրք ղէպի 4 Պոլիս յառաջանալու միտքով: Այս վտանգաւոր իրավիճակէն օգտուելով, Մուսթաֆա Քեմալ 1922 Օգոստոս 25-ին յարձակեցաւ Աֆիոն Գարազիտարի վրայ եւ պարտութեան մատնեց յոյները: Յառաջանալով ղէպի Զմիւռնիա: Երկու շաբաթ ետք, Սեպտեմբեր 9-ին, դաշնակից պետութեանց՝ անգլիական, ֆրանսական, իտալական եւ ամերիկեան զրահաւորները արդէն խարսիեցին Զմիւռնիոյ նաւահանգիստը, մինչ յունական վերջին զրահաւորը նոյն առաւօտ արդէն փախուստ տուած էր պարտութեան մատնուելէ ետք թուրքիոյ հետ ներքին կռիւներու ընթացքին:

**Քրիստոնեայ Տարրը**

Զմիւռնիոյ քրիստոնեայ տարրը իր յոյսը դրած էր այլեւս եւրոպական եւ ամերիկեան տէրութեանց վրայ, զգալով քեմալական թուրքերու վերահաս վտանգը: Օգոստոս 26-ին յոյն բանակը խորտակուեցաւ Աֆիոն Գարազիտարի մօտ, Զմիւռնիայէն 200 մղոն արեւելիք, իսկ Սեպտեմբեր 1-ին յոյներ լքեցին իրենց դիրքերը քեմալական զօրքերու յառաջացման դիմաց: Նոյն օր վերաւոր յոյն զինուորները Զմիւռնիա հասան իրենց ղէպի Յունաստան փախուստի ճամբուն վրայ թշուառ վիճակի մէջ: Մինչեւ Սեպտեմբեր 5 փախստականներու թիւը օրական 300,000-ի կը հասնէր, որոնք իրենց երախաներով եւ գոյքերով կ'ապաստանէին եկեղեցիներու եւ դպրոցներու բակերը՝ սպասելով յունական նաւերուն:

**Յունաց եւ Հայոց Ահաւոր Ջարդը**

Այս բոլորին յաջորդեց Զմիւռնիոյ 1922 թուի ահաւոր ջարդը երբ քաղաքը թալանի եւ հրդեհի մատնուեցաւ: Բազմահազար յոյներու կողքին նաեւ բարգաւաճ հայեր կ'ապրէին իրենց

եկեղեցիներով ու դպրոցներով Թեմակալ Առաջնորդ Ղեւոնդ Եպիսկոպոս Դուրեանի եւ հոգեւորականութեան հոգածութեան ներքեւ: Շատեր խուճապահար ստիպուեցան փախչել ղէպի Յունաստան: Այդ շրջանին Զմիւռնիոյ մէջ կար 15,000 հայութիւն, եւ շրջակայքն ալ՝ 10,000, օրուան Առաջնորդին որ նախկին Առաջնորդն էր Պուլիկարիոյ թեմին եւ յետագային նահապետի Առաջնորդը Ամերիկահայ թեմին, որ իր ականատեսի վկայութիւնները օրագրի ձեւով պահած էր ու յետոյ լոյս տեսած Երուսաղէմի 1982 թուի «Սիւն» ամսագրի յաջորդական թիւերուն մէջ:

Զմիւռնիոյ շրջանի հայութիւնը «սարսափահար ու սոված կը լեցուէին գողութի հաստատութեանց պատասպարաններուն մէջ»: Քաղաքի վտանգին առաջը առնելու համար հայ եւ յոյն եպիսկոպոսները կ'որոշէին Սեպտեմբեր 2-ին դիմում կատարել յոյն Բարձր Քոմիտեին եւ Զմիւռնիոյ կառավարիչին արտօնութիւն ստանալու օտար ղեկավանատներու օգնութիւնը հայցելու, որուն սակայն, ինչպէս միշտ, անգլիական, ամերիկեան եւ իտալական հիւպատոսները աչքը կ'արձակէին արտօնի եւ անորոշ, առարկելով որ իրենց պարտքը կատարած էին Զմիւռնիա զրահաւորները ղրկելով ամերիկեան քաղաքացիներու պաշտպանութեան համար: Երբ մեծ պետութիւններ դատարկ եւ խաբուսիկ պաշտպանութիւն կը քարոզէին քրիստոնեաներու նկատմամբ, անդին Ղեւոնդ Եպիսկոպոս Դուրեան եւ յոյն խրիստոսոմոս Եպիսկոպոս կը հեռագրէին Յունաստան եւ 4 Պոլիս Հայոց Զաւէն Պատրիարքին փոխադրանաւեր խնդրելով վտանգուած հայութիւնը անյապաղ Զմիւռնիայէն աչքուր փոխադրելու համար, առաջին հերթին ղէպի Յունաստան:

**Յոյներուն Նահանջը**

Միւս կողմէ արդէն յոյն կառավարութիւնը տկարութեան իսկական նշաններ ցոյց կուտար պատճառ դառնալով թշնամիին անարդեւ թափանցումին ղէպի Զմիւռնիայէ: Յոյներու մեկնումով ծայր պիտի տար խուճապահար ելքը մնացեալ քրիստոնեայ տարրին, ուղղակի եւրոպական պետութեանց ներկայացուցիչներու աջքին առնելու: Երկու օր ետք, Սեպտեմբեր 9-ին Զմիւռնիա մտած թուրք զինուորականները թրջական դրօշը պարզելով սկսան յառաջանալ հայոց թաղերուն ուղղութեամբ՝ պատճառ դառնալով հայոց իրենց տուներէն Սուրբ Ստեփաննոս մայր եկեղեցին ապաստանիլ:

Զմիւռնիոյ հայոց Առաջնորդարանը թրջական դրօշը պարզեց ի նշան Օսմանեան տիրապետութեան: Առաջնորդ Ղեւոնդ Եպիսկոպոս կը գրէր թէ «խուճանը բռնութեամբ տուներ կը մտնէր, տնեցիները կը խոշտանգէր, եւ կողպտուելէ ետք կը սպաննէր»: 200,000-ի կը հասնէր քրիստոնեաներու թիւը Զմիւռնիոյ մէջ: Սեպ-



տեմբեր 6-ին ամերիկեան երկու զրահաւորներ եւս հասան մարդասիրական նպատակներով, քանի որ Միացեալ Նահանգներ պատերազմի մէջ էին թուրքոյ հետ, ինչպէս միւս պետութիւնները էին: Անոնք ամերիկեան քաղաքացիները հեռացուցին ղէպի Միդիլլինի կղզին երբ արդէն քաղաքը թողլքուած էր:

**Հայ եւ Յոյն Եպիսկոպոսներու Ահազանգը**

Ղեւոնդ եւ խրիստոսոմոս Առաջնորդ եպիսկոպոսները այս անգամ Անգլիա Քէնթըրպըրի Արքեպիսկոպոսին դիմեցին խնդրելով որ Անգլիա զինադադար առաջարկէր Քեմալի՝ «եանուն Քրիստոսի աճապարեցէ կանխելու համար վերահաս աղէտը» ըսելով, եւ սակայն խնդրանքը տեղը չհասաւ, եւ անոր փոխարէն Անգլիա խոստացաւ պաշտպանել քաղաքի անգլիացի համայնքները:

**Ջարդ եւ Դրոցի Զմիւռնիոյ Մէջ**

Սեպտեմբեր 9-ին, 1922 շաբաթ օր, թուրք յառաջապահ զօրքերը Զմիւռնիա մտան, եւ նոյն գիշերը յոյն եւ հայ թաղամասերը նշաւակ դարձան թուրք վայրագութեանց, եւ յաջորդ օրն ալ ջարդերը սաստկացան եւ հրդեհ մը բռնկեցաւ հայկական թաղերէ ներս: Քեմալ իսկոյն Զմիւռնիոյ կառավարչութիւնը յանձնեց Նուրետտինին: Ինչ որ Զմիւռնիա էր տեսած 1915-ին, տեսաւ այդ օր երբ Քեմալական թուրքերը հայոց ղէմ առին բնաջնջումի ոճրապարտ քայլը: Քաղաքին երկու երրորդը, այսինքն հայոց, յունաց եւ եւրոպացուց թաղերը հրոյ ճարակ դարձան: Սպաննուած հայերու շարքին կային Զմիւռնիոյ Թեմի քաղաքական ժողովի ատենապետը՝ օրէնսգէտ եւ իրաւաբան Նազարէթ Ներսէսեան իր կնոջ եւ զաւակին հետ:

**Յոյն Սետրապոլիտը Նահատակ**

Կառավարիչ Նուրետտինի առաջին գործը եղաւ տեսակցիլ յոյն մետրապոլիտ խրիստոսոմոս Եպիսկոպոսին հետ յայտնելու համար որ Անկիւրիոյ պատերազմական ատենանը մահուան դատապարտած էր զինք, ցոյց տալով թղթածրար մը կեղծ ամբաստանութիւններով լեցուն: Բարձրատիճան հոգեւորականը խուճապին կը յանձնէր երբ եպիսկոպոսը շնքէն դուրս կ'ելլէր: Հէք Մետրապոլիտը անկարագրելի խոշտանգումներու են-

թարկելէ ետք կը սպաննէին տեղւոյն վրայ, մինչ անդին հայեր գանգուածաբար կը կոտորէին ուժակոծելով Ս Ստեփաննոս եկեղեցին ուր հազարաւոր հայեր խոնուած էին:

**Երկու Քաջ Հայ Կիմեր**

Երկու հայ կիմեր յանձն կ'առնէին խնդրագիր նամակներ հասցնել եւրոպական հիւպատոսարաններուն՝ ծպտուած որպէս հիւանդապահուհիներ: Նամակները հասան իտալացի Աւագերէց Տօն Սքալիարինիի ձեռքը, որուն միջնորդութեամբ ուժակոծումը կը դադարէր եւ հազարաւոր ապաստանեալներ եկեղեցիէն դուրս կը բերուէին: Երբ Աւագերէց Սքալիարինի կը շրջէր հայոց թաղերը, կը տեսնէր երկու ծպտեալ կիմերը, եւ լսելով անոնց թախանձանքը կը խոստանար հրամանատարին երթալ եւ անոր գիւթները հայցել: Նոյն օր Երէջքը կը վերադառնար Ս Ստեփաննոս հայոց եկեղեցի աւետելու հրամանատարին բարեհաճ հրահանգը, որուն շնորհիւ յարձակումները կը դադարէին: Սեպտեմբեր 12-ին յատուկ յանձնախումբ մը, երկու լատին եկեղեցականներէ, երկու եւրոպացի նաւագնորէ եւ մէկ թուրք սպայէ բաղկացած, Սուրբ Ստեփաննոս եկեղեցին գալով դուրս կը հանէին բոլորը որոնց մէջ նաեւ 2,000-ի չափ մանուկներ: Երեկոյեան ժամուն եկեղեցին պարպուած էր եւ թուրքեր տիրացած անոր:

**Ազատարար Յունական Նաւերը**

Հակառակ քաղաքի համատարած հրդեհին, 1922 Սեպտեմբեր 24-ին Յունական շածանաւ մը Զմիւռնիա գալով ազատեց 15,000 մարդիկ, կիմեր եւ երախաներ: Երկու օր ետք այս անգամ 17 յունական նաւեր եկան եւ 40,000 մարդիկ եւս փոխադրեցին Միդիլլինի: Անոնց յաջորդեց անգլիական փոխադրանաւ մը, եւ Նոյնթեմբեր 1-ին, ընդամենը 180,000 գաղթականներ Զմիւռնիայէն փոխադրուած էին Մուսթաֆա Քեմալի տուած ժամկէտէն միայն վեց ժամ առաջ: Անոնցմէ անկախ 60,000 հոգի եւս ազատեցան անգլիական եւ յունական նաւերով: Զմիւռնիայէն ազատագրուած քրիստոնեայ տարրին ընդհանուր թիւը կը հասնէր 250,000-ի, անոնց մէջ սակաւթիւ հայեր որոնք ազատեցան աղէտէն առաջ հոն բնակող 25,000-ի հասնող հայութեան:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք  
«Մասիս» Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680 massis2@earthlink.net**



### Տան Տնտեսութիւնը ճիշդ Վարելու Արդիւնաւէտ Դամակարգեր

Որքան մաքրէք տունը՝ անիկա կարծես չի թեթեւնար, իսկ ուժերը կը սպառին: Եւ այդ ամէնը տեղի կ'ունենայ այն պատճառով, որ դուք այդ գործով կը զբաղիք առանց մտածուած համակարգի: Ահա ահա սիկ արդիւնաւէտ համակարգեր տան տնտեսութիւնը ճիշդ վարելու համար:



անով, որ չ'ենթադրեր աշխատանքային սխրագործութիւն ամիսը մէկ անգամ, այլ՝ նուազագոյն, զրեթէ աննշան ամէնօրեայ ջանքեր, որոնք կը դառնան սովորութիւն:

- Մէկ օր-մէկ սենեակ: Ամէն օր մաքրեցէք տունը, սակայն միայն մէկ սենեակը: Օրինակ, երկուշաբթի՝ խոհանոցը, երեքշաբթի՝ միջանցքը, Չորեքշաբթի՝ ննջասենեակը եւ այլն: Այս ձեւով տան մէջ միշտ կարգուկանոն կ'ըլլայ:

- «Թուշող տիկին»: Այս համակարգը բարդ է, բայց գործնական: Անիկա կը հիմնուի քանի մը կանոնի վրայ: Պարբերաբար նետեցէք հին, կոտորուած եւ չօգտագործուող իրերէն: Ստեղծեցէք արարողակարգ՝ առաւօտեան սուրճ, յետոյ ջրել ծաղիկները եւ այսպէս:

- Մաքրութիւնը ժամանակաչափով ըրէք. դրէք յստակ ժամ եւ այդ ընթացքին զբաղեցէք միայն մէկ բանով, առանց շեղելու:

- Տարածքը բաժնեցէք հատուածներու: Նոյնիսկ մէկ սենեակի մէջ կան տարբեր հատուածներ, օրինակ տեղ, ուր հագուստը կը հաւաքուի, տեղ, ուր համակարգիչը դրուած է: Առանձնացուցէք հատուածը եւ մաքրեցէք միայն այդ տեղը, առանց շեղելու մնացած հատուածներուն վրայ:

Այս համակարգը յարմար է

- ճափոնական 5 Ս համակարգ: Ընդհանրապէս անիկա յօրինած են աշխատանքային կազմակերպման համար, սակայն պարզուած է, որ լաւ կ'աշխատի նաեւ տան պարագային:

- Դասակարգում. կը հաւաքէք տան հատուածներէն ա'յն, ինչ իր տեղը դրուած է՝ գաւաթները աշխատանքային սեղանէն, զիրքերը՝ բազկաթոռէն:

- Կարգուկանոնի պահպանում. ոչ-յաճախ օգտագործուող իրերը կը պահէք աւելի հեռու քան յաճախ օգտագործուողները: Մաքրութեան պահպանում. կը կազմէք մաքրելու տեղերու ցուցակ՝ մէկ օրը մէկ սենեակ:

- Կատարելագործում. չկայ համակարգ, որ կարիք չունի կատարելագործման: Ընթացակարգի ժամանակ աւելի դիւրին է հասկնալ ինչը փոփոխութիւններու կարիք ունի:

### Երջանիկ Մարդոց Կեանքի Սէջ Առկայ 8 Կանոն

Երջանկութիւնը անհասանելի երեւոյթ է, ինչպէս յաճախ կը թուի մեզի եւ անոր հասնելը բաւական դիւրին է:

1) Երջանիկ մարդիկ ամուր յարաբերութիւններ կը պահպանեն շրջապատի հետ

- Հետազօտողները ապացուցած են, որ 70-ը անց տարիքին երջանիկ են ա'յն մարդիկ, որոնք կեանքի ընթացքին կը գնահատէին մտերիմներու հետ յարաբերութիւնները եւ կ'ընէին ամէն բան, որպէսզի պահպանեն զանոնք:

2) Անոնք ժամանակը աւելի բարձր կը գնահատեն նիւթականէն

- Պարզուած է, որ երջանիկ մարդոց մեծ ամասնութիւնը նախընտրած է ունենալ աւելի շատ ժամանակ քան դրամ: Ատիկա միայն կը հաստատէ, որ մարդիկ, որոնց համար ժամանակը բոլոր նիւթական բարիքներէն աւելի արժէքաւոր է, կեանքէն աւելի շատ հաճոյք կը ստանան:

3) Անոնք կը ծրագրաւորեն ծախսերը եւ կ'ապրին ըստ հնարաւորութիւններու

- Անհրաժեշտ հաշիւները փակելու դժուարութիւնը իւրաքանչիւր մարդու համար ճնշող իրավիճակ է: Այդ պատճառով հետազօտողները խորհուրդ կու տան ճշգրիտ գնահատել եկամուտները եւ չընել աւելորդ ծախսեր:

4) Երջանիկ մարդիկ կրնան նկատել հիասքանչը

- Հետազօտողները կը նշեն, որ մարդիկ, որոնք յաճախ ուշադրութիւն կը դարձնեն հաճելի մանրութիւններու, որոնք անոնց հետ տեղի կ'ունենան կամ ուղղակի կը նկատեն շրջապատող գեղեցկութիւնը, աւելի գոհ կ'ըլլան կեանքէն եւ աւելի երջանիկ են:

5) Շատ ժամանակ կ'անցընեն ընկերներու հետ

- Ընկերներու շրջապատի մէջ անցած ժամանակը իւրաքանչիւր



մարդ կը դարձնէ աւելի երջանիկ: Յատուկ բաւարարութիւն մենք կը ստանանք ամենամօտ մարդոց շրջապատի մէջ, որոնք երջանիկ են: Անոնց ուրախութիւնը արագ կը փոխանցուի շրջապատին:

6) Հոգ կը տանին մտերիմներուն եւ յաճախ կ'ուրախացնեն անոնց

- Հոգեբանները կը նշեն, որ մարդիկ, որոնք յաճախ բարի քայլեր կ'առնեն, աւելի երջանիկ են քան անոնք, որոնք ձեռնպահ կը մնան անոնցմէ:

7) Դրամը կը ծախսեն տպաւորութիւններու վրայ, այլ ոչ՝ նիւթական բաներու

- Գոյութիւն ունի այսպիսի միտում, որ մարդիկ կը դառնան աւելի երջանիկ, եթէ յաճախ դրամը ծախսեն զգացմունքներու վրայ: Եւ եթէ ցանկալի իրերու գնումը մարդը կը դարձնէ երջանիկ, ուրախութեան զգացողութիւնը գնուած իրերէն աւելի կարճ կը տեւէ քան անմուտք ճամբորդութիւնները:

8) Երջանիկ մարդիկ մարմնամարզանքով կը զբաղին

- Ապացուցուած է, որ մարմնամարզութիւնը կ'օգնէ պայքարելու հոգեկան խնդիրներու եւ ճնշախտային իրավիճակներու դէմ: Բացի այդ, հետազօտութիւնները ցոյց տուած են, որ մարմնամարզանքը ուղիղ կերպով կապուած է երջանկութեան զգացողութեան հետ:

### Համեմունքներու «Արքան» Հիլը Կ'օգնէ Ազատելու Բերանի Shաճ Հոտէն, Շաքարախտէն

Հիլը ամենատարածուած համեմունքներէն է, որ հարուստ է աննդարար յատկութիւններով: «Արքան» համարուող այս համեմունքը կարելի է օգտագործել շաքար մը խնդիրներու պարագային:

- Տհաճ հոտ բերանէն: Հիլը արդիւնաւէտ միջոց է բերանին տհաճ հոտէն ազատելու համար: Սերմերը պարզապէս ծամելով՝ կրնաք վերացնել բերանի տհաճ հոտը, իսկ շնչառութիւնը կը թարմանայ:

- Կը կանխարգիլէ կիրի յառաջացումը: Հիլը ոչ միայն կ'օգնէ սպաննելու մանրէները, որոնք տհաճ հոտի պատճառ կը դառնան, այլեւ՝ կը կանխարգիլէ կիրի յառաջացումը եւ լինտերու բորբոքումը:

- Արեան ճնշում: Հիլը կրնայ օգնել իջեցնելու արեան ճնշումը, որ շատ կարեւոր է սրտի եւ երի-

կամներու առողջութեան համար:

- Շաքարախտ: Հիլը ունի մեծ քանակով մանգանատ, որուն իբրեւ արդիւնք անիկա արդիւնաւէտ միջոց է շաքարախտով տառապողներու համար: Ըստ հետազօտութիւններու, շաքարախտով տառապողներու սննդակարգին մէջ մանգանատ աւելցնելը դրական կերպով կ'ազդէ անոնց վիճակին վրայ:

- Նիւթափոխանակութեան համակարգ: Հիլը յաճախ կ'օգտագործուի նաեւ նիւթափոխանակութեան համակարգի խնդիրներու պարագային: Այս համեմունքը կրնայ օգնել ազատելու ջրածրամներէն:


- Շնչարգելութիւն (asthma): Հիլը կրնայ օգտակար ըլլալ նաեւ մարդոց, որոնք կը պայքարին շնչուղիներու հետ կապուած խնդիրներու դէմ: Հիլը կ'օգնէ լաւացնելու շնչառութիւնը:

**OFFICE SPACE FOR RENT IN PASADENA**  
**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104  
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով  
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

**St. Gregory Armenian Church**

**SAVE THE DATE**

Under the Auspices of  
His Eminence  
**Abp. Hovnan Derderian**  
Primate of the Western Diocese



**Celebration of the 20<sup>th</sup> Anniversary of Ordination**  
*To the Sacred Priesthood of Christ*  
**And the 50<sup>th</sup> Anniversary of Service to the**  
*Armenian Apostolic Church*  
of  
**Rev. Fr. Archpriest Sarkis Petoyan**  
**On Sunday, September 9, 2018**  
**10:30 a.m. Celebration of Divine Liturgy**  
*Immediately Followed by a Luncheon at Geragos Hall*  
2215 E. Colorado Blvd. Pasadena, CA 91107

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Մխիթարեանի Պատասխանն Իրեն Քննադատողներին

Ֆուտբոլի ազգային հաւաքակա- նի եւ Լոնտոնի «Արսենալ»-ի կիսա- պաշտպան Հենրիխ Մխիթարեանն անդրադարձել է իր եւ իր թիմի հասցէին հնչող քննադատութիւննե- րին: Հայ ֆուտպոլիստը է, որ չի հասկանում, թէ ինչու են մարզիկ այդքան քննադատում:



«Ես ինքս իմ ամենամեծ քննա- դատն եմ, դրա համար լրացուցիչ քննադատութեան կարիք չունեմ: Ես շատ լաւ գիտեմ, թէ ինչ եմ տալիս թիմին եւ շատ լաւ գիտեմ, թէ ինչ է թիմը ինձ տալիս: Մենք նոր մարզիչ ունենք եւ փորձում ենք հարմարուել նրա փրկիտփայտութեանը եւ հասկա- նալ նրա պահանջները: Մրցաշրջանը մեզ համար դժուար սկսուեց, մենք դիմակայեցինք երկու հրաշալի թիմերի՝ «Մանչեսթեր Սիթի»-ին եւ «Չելսի»-ին, սակայն Պրեմիեր լիգայում հեշտ մրցակիցներ չկան: Մենք պարտուել ենք մեկնարկային երկու խաղերում, բայց սա ֆուտպոլ է: Մենք պէտք է շարունակենք դրական տրամադրուել եւ լաւ արդիւնքները չեն ուշանայ», - ասել է Հենրիխ Մխիթարեանը:

Նա յաւելել է, որ իրենք ճնշում չեն գոլում, չեն մտածում, որ ինչ- որ բան այն է: Մխիթարեանն ընդգծել է, որ քննադատութիւններին ուշադրութիւն չի դարձնում, քանի որ շատ լաւ գիտի, թէ երբ է լաւ խաղացել, իսկ երբ՝ վատ:

## «Արսենալի» Առաջին Յաղթանակը Պրեմյեր Լիգայում

Անգլիական Պրեմյեր լիգայի երրորդ տուրում Լոնտոնի «Արսենալը» սե- փական դաշտում 3:1 հա- շուով կամային յաղթանակ տարաւ «Վեստ Հեմի» նկատմամբ:



Առաջին խաղակէսն աւարտուեց 1:1 հաշուով, իսկ դաշտի տէրերն ընդ- միջումից յետոյ առաջ ան- ցան մրցակցի ինքնագոլի շնորհիւ: Խաղի վերջա- կեան աւելացուած ժամա- նակում դրեց փոխարինման դուրս եկած անգլիացի յարձակող Դենի Ուեյլբեկը:

Հայաստանի հաւաքականի 29-ամեայ կիսապաշտպան Հենրիխ Մխի- թարեանն «Արսենալի» մեկնարկային կազմում հանդէս եկաւ առանց փոխարինման:

Սա պաշտօնական խաղերում սպանացի մասնագէտ Ունաի Էմերի առաջին յաղթանակն էր «Արսենալի» գլխաւոր մարզիչի պաշտօնում:

Յիշեցնենք, որ Պրեմյեր լիգայի նախորդ 2 տուրերում «Արսենալը» պարտուել է գործող ախոյեան «Մանչեսթեր Սիթիին» (0:2) ու «Չելսիին» (2:3): «Չելսի» դէմ խաղում Հենրիխ Մխիթարեանը դարձել էր գոլի ու կոլային փոխանցման հեղինակ:

## Սալահի Կոլը Յաղթանակ Բերեց «Լիվերպուլին»

Անգլիացի առաջնութեան եր- րորդ տուրում «Լիվերպուլը» սեփա- կան դաշտում նուազագոյն հաշուով պարտութեան մատնեց «Բրայթօնին», որն անցկած տուրում յաղթել էր «Մանչեսթեր Յունայթեդին» (3:2):



Լիվերպուլցիների յաղթական կոլն առաջին խաղակէսում հեղինա- կեց եգիպտացի յարձակող Մոհա- մեդ Սալահը:

Սալահը Լիվերպուլի «Էնֆիլդ» ստատիոնում անցկացրեց 29-րդ հան- դիպումը եւ խփեց 29-րդ կոլը:

«Լիվերպուլը» տարաւ երրորդ յաղթանակը եւ 9 միաւորով գլխաւորեց մրցաշարային աղիւսակը:

## Եւրոպայի Ախոյեան Էդգար Ստեփանեան. Չի Սպասում, որ Կը Նուաճեմ Ոսկէ Մետալ



Մեր ազգի, մեր երկրի համար պատմութիւն է մինչեւ 23 տարեկանների Եւրոպայի առաջնութեան ոսկէ մետալը, 98 միաւորով յաղթելը, հեծանուսպորտում այսպիսի արդիւնքներ ունենալն ու օլիմպիական ուղեգրին այսքան մօտ լինելը:

Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցում ասաց Հայաստանի առաջատար հեծանուորիչ Էդգար Ստեփանեանը, որը Օգոս- տոսի 24-ին Շուեյցարիայում նուաճել էր հրապարակային հեծանուակազ- քի Եւրոպայի մինչեւ 23 տարեկանների ախոյեանի տիտղոսը: Ստեփան- եանը ոսկէ մետալ էր նուաճել իմբակային վազք միաւորներով մրցաձեւում (40 կմ, 200 շրջան)՝ հաւաքելով 98 միաւոր:

## Մահացել է «Արարատի-73»-ի Լեգենդար Դարպասապահ Ալիոշա Աբրահամեանը



Օգոստոսի 26-ին մահացել է Երեւանի «Արարատի» լեգենդար դարպասապահ Ալիոշա Աբրահամեանը:

Ալիոշա Աբրահամեանը ծնուել էր 1945 թուականի Օգոստոսի 28- ին Գիւմրիում (Լենինական): 1973-ին նա «Արարատի» կազմում դարձել էր ԽՍՀՄ ախոյեան ու գաւաթակիր: ԽՍՀՄ առաջնութիւնում Ալիոշա Աբրահամեանն «Արարատի» կազմում անցկացրել է 276 հանդիպում: Ֆուտպոլիստի կարիերան աւարտելուց յետոյ նա զբաղուել էր մարզչական աշխատանքով:

2013թ. Հոկտեմբերի 10-ին հայկական ֆուտպոլի զարգացման գործում ներդրած նշանակալի աւանդի եւ ձեռք բերած փայլուն նուաճումների համար Ալիոշա Աբրահամեանը պարգեւատրուել էր «Հայրենիքին մատուցած ծառայութիւնների համար» առաջին աստիճա- նի մետալով:

Օգոստոսի 28-ին Ալիոշա Աբրահամեանը կը դառնար 73 տարեկան: Նա տեւական ժամանակ բուժուել էր հիւանդութիւնից:

## Գուարդիոլան՝ Մրցակցի Ձեռքով Կոլի Մասին

Անգլիացի գործող ախոյեան «Մանչեսթեր Սիթիի» գլխաւոր մարզիչ Խոսեպ Գուարդիոլան մեկ- նաբանել է «Վուլվերհեմփ- օնի» հետ արտագնայ ոչ ոքին Պրեմյեր լիգայի եր- րորդ տուրի խաղում (1:1): «Վուլվերհեմփօնի» կո- լի դրուագում գնդակը հիւ- րերի դարպասում էր յայտնուել ֆրանսացի պաշտպան Վիլի Բոլլիի ձեռքին դիպելուց յետոյ:



«Լաւ արդիւնք էր: Մենք ստեղծում էինք կոլային պահեր, սակայն նրանց դարպասապահը փրկում էր: Այդ պատճառով ոչ ոքի գրանցուեց: Մենք գիտենք, թէ մրցակիցը որքան լաւն է այս մրցաշրջանում:

Ինչ վերաբերում է մրցակցի ձեռքով կոլին, ապա դա իմ գործը չէ: Թող Պրեմյեր լիգան որոշի, թէ երբ է պէտք կիրառել տեսակրկնապատ- կերները: Ես պարզապէս շնորհակալութիւն յայտնեցի մրցավարին», - մարզիչի խօսքը մէջբերում է BBC-ն:

Յիշեցնենք, որ Պրեմյեր լիգայի մեկնարկային 2 տուրերում Խոսեպ Գուարդիոլայի թիմը յաղթել էր «Արսենալին» (2:0) եւ «Հադերսֆիլդին» (6:1):

## AMAA Centennial Banquet

Los Angeles – October 20, 6 pm , AMAA Centennial Banquet at Biltmore Hotel will honor Benefactors Stephen Philibosian and Conte Foundations, Sheen Family Trust, Gerald and Patricia Turpanjian, TF Educational Foundation. Kenneth Khachigian, Master of Ceremonies . For more information call Levon Filian 626.487.5878 or the AMAA Office 201.265.2607 or e-mail mpoulos@amaa.org

### ԱՆՍՊԱՍԵԼԻ ԿՈՐՈՒՍ...

Յարուժիւն կարապետեանի անսպասելի մահը խոր ցաւ պատճառեց հարազատներին, ընկերներին, շրջապատին, որոնց հետ սերտ կապուած էր նա: Կորուստը ծանր էր...:

Երբ հեռախօսով ինձ յայտնեցին Յարուժիւնի մահուան լուրը, կարծէք չըմբռնեցի, տեղում սառել էի, ականջներս չէի հաւատում...: Բայց իրականութիւնից չես փախչի:

Մօտ մէկ ամիս առաջ ընկերներով, բարեկամներով նշեցինք յայտնի միզաբան (միզագէտ, ուրոլոգ) եւ ազգային բարերար Կարօ Դերձակեանի ծնունդը իր յարկի տակ եւ առաջին անգամ խորովածը մեր ձեռքով պատրաստեցինք, որին աշխուժօրէն մասնակցեց Յարուժիւնը, չնայած լաւ չէր զգում իրեն: Ահա այդ ուրախութիւնից յետոյ՝ Յարուժիւնի մահուան գոյժը...:

Ես իմ պարտքս եմ կատարում եւ հոգու հանգստութիւն զգում՝ գրելով այս տողերը Յարուժիւնի՝ իմ լաւ ընկերոջ մասին:

1999 թ. Երեւանում որպէս պատգամաւոր մասնակցում էի Հայաստան-Սփիւռք համաժողովին: Այդ ընթացքում ժողովի Աւետիսեանի տանը հանդիպեցի, ծանօթացալ Յարուժիւն Կարապետեանի հետ: Ժողովի Աւետիսեանը Հայաստանի հայրենակցական միութիւնների խորհրդի ատենապետն է: Նրա հետ ծանօթ էի Հայաստանի ու Սփիւռքի հայրենակցական միութիւնների սերտօրէն կապուած գործունէութեան հետ: Յարուժիւն Կարապետեանը Հայաստանի այն-թաղայինների հայրենակցական միութեան նախագահն էր: Նա պատմեց, թէ որքան ջանք էր թափել Նոր Այնթապի տարածքը մաքրելու, ապահով պահելու ու դպրոցի վերականգման աշխատանքները կարգաւորելու համար: Ծանօթանալուց յետոյ նա ժողովին ու ինձ հրաւիրեց այնթաղայինների բացած նոր ճաշարանը լեհմեծուն ուտելու:

Մեր յարաբերութիւնները աւելի սերտացան յետագայում, քանի որ ես յաճախ էի գնում Երեւան եւ հանդիպում ժողովին

ու Յարուժիւնին: Այնուհետեւ Յարուժիւնը եղաւ Լոս Անձելոսում: Մենք հանդիպեցինք: Նրա առաջարկութեամբ այցելեցինք մօրաքրոջ տունը, ծանօթացրեց նրա գերդաստանի հետ եւ այսպէս աւելի մօտեցանք իրար: Նա շատ անմիջական էր:

Նա իր բարի բնավորութեամբ ինչպէս Երեւանում, այնպէս էլ Լոս Անձելոսում ստեղծեց իր՝ Յարուժիւնի ընկերական ու բարեկամական շրջապատը, որի հետ իր անսակարկ, մասնակցութիւնն ունեցաւ հայրենիքին ու հայապահպանման նուիրուած ազգային գործունէութիւններին:

Մի առիթով մենք հանդիպեցինք յայտնի քանդակագործ Գասպար Գասպարեանի եւ գորգի մասնագէտ Հրաչ Գրիգորեանի հետ: Վերջինս մեզ հրաւիրեց իր տունը: Այն անտառի մէջ էր՝ գեղեցիկ բնութեան գրկում: Տանտէրը թոնիր էր սարքել, որտեղ էլ առաջին խորովածը արեցինք: Սեղանի շուրջ, լաւ տրամադրութեան մէջ, Յարուժիւնը մեզ պատմեց իր ուսանողական կեանքից, երաժշտական աշխարհից եւ նուիրուած ազգային գործունէութիւնից, որոնք ուղեկցում էին ազգային երգերի իր անգնահատելի կատարմամբ:

Որքան էլ գնահատենք, գնահատելի տողեր գրենք Յարուժիւնի մասին, չեն բաւականացնի իր ազնիւ ու վեհ հոգու հոլովութիւնը արտայայտելու: Իր ստեղծած, իրեն յարգող ընկերական-բարեկամական շրջապատն էլ հոծ բազմութեամբ նրան ուղեկցեց դէպի իր «նոր կացարանը»: Յիշատակն արդարոց, օրհնութեամբ եղիցի:

Աստուած հոգին պահի լոյսերի մէջ որպէս ազնիւ ու անաղարտ հոգով արարածի:

Աստուծոյ մխիթարութեամբ թող սփոփուի Յարուժիւնի ընտանիքը. կողակիցը՝ Սվետլանան, որդին՝ Հայկը, դուստրը՝ Աստղիկը եւ բոլոր հարազատները:

Անկեղծ սիրով՝ Վահան Բահարեան

### Ձաւախքում Վերածուեց



Շարունակուած էջ 13-էն

ցութեամբ: Դունբացեքի արարողութիւնից յետոյ Սրբասուրբ միւռնոնով օծուեցին Սուրբ Յարուժիւն եկեղեցու Սուրբ Սեղանը, Մկրտութեան աւազանը եւ 16 սիւները:

Հանդիսաւոր արարողութեանը ներկայ էին Վրաստանի խորհրդարանի պատգամաւորներ Հենգել Մկրտեանը եւ Սամուէլ Մանուկեանը, Ախալքալաքի շրջանային ժողովի նախագահ Նաիրի Իրիցեանը, Ախալքալաքի շրջանային ժողովի պատգամաւորներ, հասարակական, պետական գործիչներ, բազում հաւատացեալներ:

Վերականգնուած եւ վերածուած եկեղեցում անդրանիկ Սուրբ եւ Անմահ Պատարագը մատուցեց Արակովայի «Սուրբ Գէորգ» եկեղեցու ու յարակից գիւղերի հոգեւոր հովիւ արժանապատիւ Տէր Թադէոս քահանայ Տէր-Մկրտչեանը: Ու վառուեցին առաջին մոմերը եկեղեցում: Յընթացս Սուրբ Պատարագի կատարուեց խոստովանութեան կարգ եւ հաւատացեալները ստացան հաղորդութիւն:

Յաւարտ Սուրբ Պատարագի թեմակալ առաջնորդը տեղի բնակիչներին շնորհաւորեց Սուրբ Յարուժիւն եկեղեցու վերածման կա-

պակցութեամբ, գնահատանքի խօսքեր ուղղեց բարերարի ընտանիքին, Մեսրոպ Մկրտչեանին յանձնեց Օրհնութեան գիր եւ նուիրեց Սրբապատկեր: Սուրբ Պատարագն աւարտուեց Վիրահայոց թեմի առաջնորդի Պահպանիչ աթոթքով:

Այնուհետեւ Սուրբ Յարուժիւն եկեղեցու վերածման կապակցութեամբ յարակից տարածքում կայացաւ տօնահանդէս, որին իրենց մասնակցութիւնն էին բերել Վիրահայոց թեմի Արակովայի «Նորմեան հայրիկ» կեդրոնի սաները, տօնահանդէսը իրենց կատարումներով գեղեցկացրեցին նաեւ յարակից գիւղերից եկած անհատ կատարողները:

Տօնական օրը գիւղում աւարտուեց բարերարի ընտանիքի կողմից մատուցած մատուցմամբ եւ գիւղի հանդիսութիւնների սրահում տեղացիների համար կազմակերպուած հիւրասիրութեամբ:

Յիշեցնենք, որ դեռեւս 2004 թուականին, եկեղեցու առաջին մասնակի վերանորոգումից յետոյ փոխառաջնորդ, հոգեշնորհ Տէր Բաբգէն արքեպիսկոպոստ Սալբեանի կողմից կատարուել էր եկեղեցու օրհնութեան կարգ եւ տաճարը դարձել էր Վիրահայոց թեմի գործող եկեղեցիներից մէկը:

### Վանցի Հայերու Աւանդական Տարագներ

Շարունակուած էջ 15-էն

վանքեր ու եկեղեցիներ, մկրտարաններ ու խաչքարեր, մարմարէ կիսաքանդ յուշարձաններ, հայատառ տապանաքարեր ու ատոնց մօտ լուսանկարած հայկական տարագներ հազած երիտասարդներ ու աղջիկներ:

«Այսօրուան ցուցահանդէսն իր բնոյթով փաստագրական է եւ ունի պատմական նշանակութիւն: Այն վստահաբար պիտի համալրէ Պոլսոյ հայկական համայնքի հայապահպան գործունէութեան համայնապատկերը եւ պիտի դառնայ անոր ինքնատիպ էջերէն մէկը: Այս ամէնուն համար շնորհակալութիւն կը յայտնեմ տիկին ժուլիա Մուրթլուին եւ պարոն Այթաչ


Արագին, կը ցանկամ անոնց նորանոր յաջողութիւններ իրենց ձեռնարկներուն մէջ»-աւելցուց փոխնախարարը:

Արամայիս Գրիգորեան շնորհակալութիւն յայտնեց Պոլսոյ հայ համայնքին, այն արուեստագէտներուն ու մշակութային գործիչներուն, որոնք անմնացորդ սիրով կը շարունակեն պահպանել ազգային հայկական արժէքները, կը ստեղծեն նորերը եւ արժանապատիւ կեցուածքով ատոնք կը ներկայացնեն աշխարհին:


Փոխնախարարը շնորհակալութիւն յայտնեց նաեւ «Թէքէեան կեդրոն» հիմնադրամի տնօրինութեան ցուցասրահը սիրով տրամադրելու համար:

**VA Print Media**  
 Book Printing • Hard Covers • Year Books  
 Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռաձայնէ՛ք ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**  
 1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
**Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924**  
 vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com



NATIONAL NOTARY ASSOCIATION  
 NOTARY PUBLIC

**Garine Depoyan**

626-755-4773  
 554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
 ghdepoyan@gmail.com



# ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ

## Փառասուն

### SUNDAY SEPTEMBER 23, 2018

#### VERDUGO PARK GLENDALE

1621 Canada Blvd., Glendale, CA, 91206

Starting at 11:00 am

Կազմակերպում: Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

Live Music & Dancing  
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ

Art Work Exhibition  
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՒ  
ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ

Kids Games  
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ

Armenian Food  
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

#### SPONSORS



GENERAL SPONSOR



To reserve your vendor booth  
please call Nor Serount Cultural Association  
Ձեր կրպակները ապահովելու համար  
Հեռաձայնեցեք  
Նոր Սերունդ Մշակութային Միության  
(818) 391-7938